



Զ Ե Կ ՈՒ Յ Ց

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
2020-2022 ԹԹ. ՈԱԳՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԻ ՂԱԳՄՈՒՅԱՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿ
ԵՐԵՎԱՆ 2024 Թ.



Սույն հետազոտությունն իրականացվել է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում:

Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Բովանդակային ցանկ

Նախաբան	4
Ամփոփագիր	6
Ա. Խորհրդարանական վերահսկողությունը ՆԳՆ-ի նկատմամբ	8
• Ռազմավարական ծրագիրը	9
• Ռազմավարական ծրագրի կատարումը.....	9
• Առաջարկություններ	24
Բ. Ոստիկանության ներգրավվածությունը քրեական դատավարությունում	25
• Ռազմավարական ծրագիրը	25
• Ռազմավարական ծրագրի կատարումը.....	27
Գ. Համայնքային ոստիկանության վերախմաստավորումը	33
• Ռազմավարական ծրագիրը	33
• Ռազմավարական ծրագրի կատարումը.....	35
• Առաջարկություններ	45
Դ. Մարդու իրավունքներին վերաբերող զգայուն հարցերը	46
• Ռազմավարական ծրագիրը	46
• Ռազմավարական ծրագրի կատարումը.....	49
• Առաջարկություններ	59
Ե. Բարեվարքության համակարգը	60
• Ռազմավարական ծրագիրը	60
• Ռազմավարական ծրագրի կատարումը.....	61
• Առաջարկություններ	70
Հավելված 1	73

Նախաբան

2020 թվականի ապրիլի 23-ին ՀՀ կառավարությունը ընդունեց «ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» [638-Լ նրոշումը](#)՝ երկու հավելվածներով: Դրանցում ներառված էին ոստիկանության բարեփոխումների մանրամասն ռազմավարությունը (այսուհետ՝ նաև Ռազմավարություն կամ ռազմավարական ծրագիր) և ռազմավարական ծրագրից բխող բարեփոխումների համար նախատեսված գործողությունների ծրագիրը:

Շուտով կլինի մոտ չորս տարի, ինչ ընդունվել են նշված երկու փաստաթղթերը: Դատելով հանրային տեղեկատվությունից՝ 2020-2022 թվականներին իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ ռազմավարության և գործողությունների ծրագրի իրագործման ուղղությամբ: Դրանց մեծ մասը ներկայումս ընթացքի մեջ են: Այդ ուղղությամբ նորաստեղծ Ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ նաև ՆԳՆ կամ ՆԳ նախարարություն) պարբերաբար տրամադրում է տեղեկատվություն: Ավելին, ներկայումս ՆԳ նախարարության, կառավարության, ինչպես նաև այլ պետական և ոչ պետական մարմինների կողմից աշխատանքներ են իրականացվում ոստիկանության 2024-2026 թվականների ռազմավարություն կազմելու ուղղությամբ: Նոր ռազմավարությունը մշակելու համար կարևոր է ուսումնասիրել, թե ինչպես է իրականացվել 2020-2022 թվականների Գործողությունների ծրագիրը: Մինչ այժմ հնչել են բազմաթիվ հանրային գնահատականներ այդ երկու տարիների համար նախանշված բարեփոխումների ընթացի մասին: Սակայն, օբյեկտիվորեն գնահատելու համար, թե ինչ արդյունավետությամբ են այդ բարեփոխումներն ընթացել, անհրաժեշտ է համապարփակ մասնագիտական գնահատական տալ երկու տարվա ընթացքում իրականացված բարեփոխումների կատարողականին: Դա մեծապես կնպաստի նոր ռազմավարության մշակման արդյունավետությանը:

Սույն հետազոտությունը կատարվել է վերը նշված նպատակով: Նախկին բարեփոխումների մասին մանրամասն ու օբյեկտիվ հետազոտություն ունենալը կարող է օգտակար լինել նոր ռազմավարության ու գործողությունների նոր ծրագիր մշակելու գործում: Հետազոտության համար նախանշվել են հինգ ոլորտներ, որոնք բխեցվել են 2020-2022 թթ. բարեփոխումների ռազմավարական ուղղություններից: Դրանք են խորհրդարանական վերահսկողությունը, ոստիկանությունը քրեական դատավարությունում, համայնքային ոստիկանության վերաիմաստավորումը, մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող զգայուն հարցերը և բարեվարքության համակարգի ներդրումը: Այս հինգ ուղղություններով ուսումնասիրվել ու գնահատականներ են տրվել 2020-2022 թթ. նախանշված

ռազմավարական ուղղություններին և դրանց հիման վրա ոստիկանության համակարգի բարեփոխման Գործողությունների ծրագրի կատարման ընթացքին ու արդյունքներին:

Ուսումնասիրությունը կատարվել է հարցազրույցների ու հարցումների արդյունքում ստացված տեղեկությունների ու տվյալների, իրավական ակտերի, օրենսդրական նախագծերի, մամուլի հրապարակումների, փորձագիտական կարծիքների, պետական ու խորհրդարանական մարմինների որոշումների, տեղական ու միջազգային տարբեր մարմինների հնչեցված գնահատականների ուսումնասիրության հիման վրա: Դրանց ամբողջական ցանկը ներկայացված է հետազոտության վերջում: Փորձագետները մասնակցել են նաև բարեփոխումների վերաբերյալ կազմակերպված հանրային քննարկումներին:

Ամփոփագիր

ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրով նախատեսվել է ոստիկանության համակարգում իրականացնել խորը ու համապարփակ փոփոխություններ: Դրանց որոշ մասը իրականացվել են: Ստեղծվել է նոր նախարարություն՝ Ներքին գործերի նախարարությունը, որն իր մեջ միավորել է ՀՀ Ոստիկանությունը, Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը և Փրկարար ծառայությունը: Ոստիկանության համակարգը ՆԳՆ համակարգում ներառելը հնարավորություն է տվել ոստիկանության համակարգը բերել խորհրդարանական վերահսկողություն դաշտ՝ մի բան, որը հնարավոր չէր անել նախկին համակարգի ներքո, քանի որ Ոստիկանությունը ֆորմալ առումով կառավարության մաս չէր կազմում: Մա նշանակալի ձեռքբերում է, որն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, հատկապես արդյունավետ կառավարման երկու կարևոր հատկանիշների՝ թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման նպատակով: Այդուհանդերձ, նորաստեղծ ՆԳՆ-ի նկատմամբ դեռ չեն նկատվում խորհրդարանական կառավարման ակտիվ գործընթացներ: Ազգային ժողովը չի ցուցաբերում ակտիվություն ու նախաձեռնողականություն ՆԳՆ-ի գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ: Խորհրդարանական վերահսկողության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսին են խորհրդարանական լսումները, հարցապնդումները, պատգամավորների բանավոր ու գրավոր հարցումները, մշտական ու ժամանակավոր հանձնաժողովների կողմից վերահսկողական լիազորությունները կիրառվել են սահմանափակ եղանակով ու անարդյունավետ կերպով: Թեև ԱԾ պաշտպանության և անվտանգության հանձնաժողովն ունեցել է մասնակցություն օրենսդրական փաթեթների քննարկման գործընթացում, սակայն այդ մասնակցության ծավալը, բովանդակությունը և արդյունավետությունը հանրությունը գնահատելու հնարավորություն չունի, քանի որ ոստիկանության բարեփոխումների քաղաքականության, օրենսդրության մշակման խորհրդարանական վերահսկողությունը չունի բավարար հանրայնություն:

2020-2022 թվականների բարեփոխումների ռազմավարական ծրագրի հաջորդ ուղղություններից մեկը քրեական դատավարության գործընթացում ոստիկանության համակարգի ներգրավվման հնարավորության ստեղծումն էր: Մինչև 2014 թվականը ոստիկանության համակարգում գործում էր քննչական ենթակայության մարմին, որն իրականացնում էր քրեական գործերով

նախաքննություն, իսկ մինչև 2022 թվականի հուլիս ամիսը ոստիկանությունը իրականացնում էր հանցագործությունների մասին հաղորդումներով հետաքննչական գործառույթ, որն, ըստ էության, քրեական գործի քննության նախնական փուլ էր: Այդուհանդերձ, 2021 թվականի մայիսին Քրեական դատավարության օրենսգրքի ընդունումով, որն ուժի մեջ մտավ 2022 թվականի հուլիսից, գործնականում ռազմավարական այդ հայեցակարգի իրագործումը դարձրեց բացարձակապես անհնարին: Այս լույսի ներքո հարց է բարձրանում, թե արդյոք ռազմավարության մշակողները 2020 թվականի դրությամբ չէին կարող կանխատեսել, որ նոր զարգացումների պայմաններում գործնականում անհնար կլինեին ռազմավարական այդ պլանի իրագործումը:

Ռազմավարական հաջորդ կարևոր ուղղությունը համայնքային ոստիկանության բարեփոխման հայեցակարգն էր, որով առաջարկվում էր օպտիմալացնել այս ոլորտը համայնքային ոստիկանությանը մի շարք ոչ ոստիկանական գործառույթներից ազատելով, օրինակ՝ դատական ծանուցագրերի հանձնումը, կալանավորված անձանց ուղեկցումը, զինվորական վարժական հավաքների կազմակերպչական աշխատանքներին օժանդակությունը և այլն: Այդուհանդերձ, համայնքային ոստիկանությունը դեռ շարունակում է այս գործառույթների իրագործումը: Սակայն նախատեսվում է մոտ ապագայում ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ, որպեսզի սեղմ ժամկետներում մշակվի ոչ ոստիկանական գործառույթները այլ ստորաբաժանումներին հանձնելու վերաբերյալ օրենքների փոփոխությունների նախագծեր: Ռազմավարությամբ նախատեսված էր համայնքային ոստիկանության գործառույթներն իրականացնել բազմաֆունկցիոնալ ոստիկանության միջոցով, որի պայմաններում առաջարկվում էր համայնքային ոստիկանության որոշ գործառույթներ փոխանցել պարեկային կամ որևէ այլ ոստիկանական ծառայությանը: Սակայն կայացվել է ռազմավարական որոշում, որ համայնքային ոստիկանության ծառայությունը պետք է իրականացնել ինքնուրույն կերպով, և վերջինիս գործառույթները պարեկային կամ որևէ այլ ոստիկանական ծառայության չեն փոխանցվելու: Միննույն ժամանակ, որոշվել է ընդլայնել համայնքային ոստիկանության լիազորություններ ու սահմանել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքերով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացնելու նոր լիազորություններ համայնքային ոստիկանների համար: Դեռ ընթացքի մեջ են համայնքային ոստիկանի վերջնական տեսլականի մշակումը և հայեցակարգի կազմումը: Տեսլականը նախատեսված չի եղել 2020-2022 թթ. բարեփոխումների ռազմավարությամբ, իսկ հստակորեն մշակված հայեցակարգի բացակայությունը խոչընդոտում է բարեփոխումների իրականացումը: Այս անորոշությունը նաև պայմանավորված է 2024-2026 թթ. ռազմավարության մշակման անավարտ լինելու հանգամանքով:

Մշակվել է Ոստիկանության գվարդիայի մասին օրենքի նախագիծ, որով նախատեսվում է ստեղծել ոստիկանական նոր ծառայություն, որին կվերապահվեն հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման, պետական շենքերի և կարևոր օբյեկտների պահպանության, պետական պատվիրակությունների ուղեկցման, ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման գործառույթներ: Այս նախագծի կարևորագույն արդյունքը լինելու է այն, որ ոստիկանության ուժերը կդադարեն մասամբ համարվել զինված ուժերի բաղկացուցիչ մաս, քանի որ ներկա կարգավորմամբ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ ոստիկանության զորքերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո: Նման հայեցակարգը չի բխում ոստիկանության ինդիքներից: Կարևոր բարեփոխում է ՆԳՆ-ի օպերատիվ կառավարման միասնական կենտրոնի ստեղծումը, որը հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների և ահազանգերի ընդունման և հաշվառման կենտրոնացված, համընդհանուր հարթակ է:

Բարեվարքության համակարգի ներդրումը ՆԳՆ համակարգում բարեփոխման ռազմավարական ծրագրի կարևոր տարր է: Սակայն, այս ուղղությամբ աշխատանքները դեռ անցումային փուլում են ու բավարար չափով չեն կատարվել: Ներկայումս բացակայում է ոստիկանության բարեվարքության արդյունավետ, ժամանակակից ու ամբողջական համակարգ, որը կբավարարի Հանրային ծառայության մասին օրենքի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, միջազգային իրավունքի սկզբունքներին: Արմատական փոփոխության կարիք ունեն ոստիկանության ծառայողի վարքագծի ու ծառայողական քննության նյութաիրավական հիմքերը օրենսդրությունում, ինչպես նաև ներկա կարգապահական կանոնադիրքը: Ոստիկանության ծառայողների կարգապահական պատասխանատվության մասին որոշումները չեն հրապարակվում, որի պատճառով անհնարին է գնահատել այդ որոշումների իրավաչափությունը: Ատեստավորման գործընթացում չի քննվում ոստիկանության ծառայողի բարեվարքությունը, թեև այդ մասին նշվում է կարգավորող փաստաթղթում: Այդուհանդերձ, կան նաև դրական միտումներ: Ոստիկանության կադրերի համալրման գործընթացներում կիրառվում են բարեվարքության նորմեր ու սկզբունքներ: Սակայն բարեվարքության համակարգի ամբողջական բարեփոխմանն ուղղությամբ դեռ շատ աշխատանքներ կան անելու:

Ա. Խորհրդարանական վերահսկողությունը ՆԳՆ-ի նկատմամբ

- Ռազմավարական ծրագիրը

ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել է ոստիկանության համակարգում իրականացնել բարեփոխումներ կառուցվածքային փոփոխությունների և գործառույթների հստակեցման ձևով: Մասնավորապես, նախատեսվել էր ստեղծել ժողովրդավարական խորհրդարանական պետությանը բնորոշ կառուցվածք՝ քաղաքականության մշակման և իրականացման դասական գործառույթներով, այլ կերպ ասած՝ ներքին գործերի նախարարություն, որն իր տանիքի տակ կմիավորի ոստիկանությանը բնորոշ և ոչ այնքան բնորոշ ֆունկցիաների իրականացումը և հատկապես՝ իր համակարգման ոլորտի քաղաքականության մշակումը, իրականացումն ու դրա պատասխանատվությունը:

Ռազմավարությամբ կարևորվել է նաև ամբողջ ոստիկանական ինստիտուտի մշակութային ու իրավական ապառազականացումը, որի պայմաններում ոստիկանության համակարգի ռազմական ու կիսառազմական կառույցները խաղաղ ժամանակ գործելու են քաղաքացիական կառավարման ներքո: Դա հնարավորություն կտա վերանայել բոլոր այն կարգավորումները, որոնց արդյունքում անհամաչափորեն սահմանափակվում են ոստիկանության նկատմամբ խորհրդարանական ու քաղաքացիական վերահսկողության շրջանակները, քանի որ ոլորտը մասամբ ռազմականացված է: Այսինքն, որպես ռազմավարական ուղղություն է ընտրվել ոստիկանության համակարգը նախարարության կազմում ներառելը՝ ստեղծելով Ներքին գործերի նախարարություն, որի արդյունքում քաղաքացիական կառույցը կառավարության մակարդակով ստանալու է ուժային կառույցի քաղաքականության մշակման ու իրականացման լիազորություններ՝ անհրաժեշտ (քաղաքական) պատասխանատվություններով հանդերձ: Նշված փոփոխության ակնկալվող արդյունքը նաև այն է, որ հնարավոր կլինի ոլորտի նկատմամբ իրականացնել թե՛ խորհրդարանական, թե՛ քաղաքացիական վերահսկողություն, որը բխում է ժողովրդավարական կառավարման հանրային իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից: Տվյալ դեպքում սույն բաժինը վերաբերում է ՆԳՆ-ի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությանը ու մինչ այժմ գործող պրակտիկայի գնահատմանը:

- Ռազմավարական ծրագրի կատարումը

ՀՀ-ում պառլամենտարիզմի դեռևս ամբողջությամբ կայացած չլինելու պարագայում ՀՀ ազգային ժողովը թերի և պասիվ կերպով է իրականացնում խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների կիրառումը ոստիկանության բարեփոխումների գործընթացի նկատմամբ: ՀՀ ազգային ժողովի

կողմից ոստիկանության բարեփոխումների ընթացքում ունեցած նման մոտեցումը հատկապես խնդրահարույց է ՀՀ ազգային ժողովի՝ որպես առաջնային ներկայացուցչական մանդատ ունեցող մարմնի դերի և նշանակության համատեքստում, որն ամրագրված է 2015 թ.-ին ընդունված սահմանադրական փոփոխություններով:

2022 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին [ՀՕ-457-Ն օրենքը](#), որով կառավարության կառուցվածքում ընդգրկվել է Ներքին գործերի նախարարությունը (հոդված 2, մաս 2, կետ 6.1)¹, ինչպես նաև օրենքի հավելվածում կատարվել է լրացում, որով սահմանվել են նախարարությանը վերապահված գործունեության հիմնական ոլորտները (կետ 6.1): Նշված օրենքն ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 16-ին՝ ռազմավարական ծրագիրն ընդգրկող ժամանակահատվածի ավարտից օրեր առաջ: Իհարկե, ողջունելի է Ներքին գործերի նախարարության կազմավորման օրենսդրական բազայի ընդունումը և վերջինիս փաստացի գործունեություն ծավալելը, սակայն նշված կառուցվածքային փոփոխության հիմքում ընկած և վերջինիս նպատակ հանդիսացող խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը կախված է նրանից, թե **որքանով է խորհրդարանը, իրացնելով սահմանադրությամբ իրեն վերապահված վերահսկողական ամբողջ մեխանիզմը, մասնակցում Ներքին գործերի նախարարության գործունեությանը:**

Ոստիկանության համակարգի՝ Ներքին գործերի նախարարության կազմում ներառելու արդյունքում վերջինս, ինչպես Բնակավայրերի նախարարությունները, դարձավ հաշվետու խորհրդարանի առջև, և խորհրդարանը հնարավորություն ստացավ ՆԳՆ-ի նկատմամբ կիրառելու խորհրդարանական վերահսկողության ամբողջ գործիքակազմը:

2015 թ.-ի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունն անցում կատարեց խորհրդարանական կառավարման ձևի: Խորհրդարանական կառավարման ձևում խորհրդարանը, որպես ժողովրդի կողմից առաջնային քվե ստացած մարմին, պետք է վերահսկողություն իրականացնի կառավարության նկատմամբ: Այս ելակետից է բխում նաև կառավարության (այդ թվում՝ նաև ՆԳՆ-ի) քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև՝ իր վարած քաղաքականության համար: Խորհրդարանական վերահսկողությունը կարելի է բնորոշել որպես կառավարության կողմից վարվող քաղաքականության և

¹ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հոդված 2. Կառավարության կազմը և կառուցվածքը (...) 2. Կառավարության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ նախարարությունները. (...) 6.1) ներքին գործերի նախարարությունը, (...):

իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն:² Այլ կերպ ասած, խորհրդարանական կառավարման ձևում կառավարության ստեղծումն ու գոյատևումը կախված են խորհրդարանի վստահությունից:³

Խորհրդարանական վերահսկողության առավել հաճախ կիրառվող գործիքակազմը միտված է գործադիր իշխանության գործունեության վերաբերյալ պատշաճ և համակողմանի տեղակացվածության ապահովմանը: Այս նպատակին են ուղղված մի շարք այնպիսի գործիքներ, ինչպիսիք են

- մշտական և ժամանակավոր հանձնաժողովները (Սահմանադրություն, հոդվածներ 106 և 107),
- պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը (Սահմանադրություն, հոդված 112),
- հարցապնդումները (Սահմանադրություն, հոդված 113),
- խորհրդարանական լսումները («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք (այսուհետ՝ նաև ԱԺ կանոնակարգ կամ «ԱԺ կանոնակարգ» օրենք), հոդված 125),
- Մարդու իրավունքների պաշտպանի (Սահմանադրություն, հոդված 191, մաս 2), Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (Սահմանադրություն, հոդված 194, մաս 3), Հաշվեքննիչ պալատի (Սահմանադրություն, հոդված 196, մաս 4), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (Սահմանադրություն, հոդված 198, մաս 2, կետ 1) և Կենտրոնական բանկի (Սահմանադրություն, հոդված 200, մաս 6), ՀՀ գլխավոր դատախազի (Սահմանադրություն, հոդված 177, մաս 1, «Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 35) կողմից Ազգային ժողով ներկայացվող տարեկան հաղորդումները:

1) Մշտական և ժամանակավոր հանձնաժողովները

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների վերաբերյալ հիմնարար դրույթները ստացել են սահմանադրական ամրագրում: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովները ստեղծվում են Ազգային ժողովի կողմից՝ հետևյալ նպատակներն իրականացնելու համար՝

- օրենքների նախագծերի քննարկում և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացությունների ներկայացում.

² A. Schick, “Congress and the details of administration,” Public Administration Review, Vol. 36, No. 5, Sep. - Oct., 1976, էջեր 516-528:

³Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 116:

- Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկում և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացությունների ներկայացում.

- խորհրդարանական վերահսկողության իրականացում:

ԱԺ կանոնակարգը խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացման համար մշտական հանձնաժողովներին վերապահում է մի շարք լիազորություններ, այն է՝

- հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 4).
- հրավիրել խորհրդարանական լսումներ (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 5) 55.
- ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր (ԱԺ կանոնակարգ, հոդված 12, մաս 1, կետ 6):

Համաձայն [«Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ազգային ժողովի որոշման](#)՝ ՀՀ ազգային ժողովում գործում է տասներկու մշտական հանձնաժողով, որոնցից մեկն է պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը. նշված մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտը, ի թիվս այլնի, ներառում է ոստիկանությունը և ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայությունը եւ այդ ոլորտները կարգավորող օրենքները և ունի 11 անդամ:

Չնայած այն հանգամանքին, որ սույն հետազոտության արդյունքում իրականացված հարցազրույցների ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչները փաստել են, որ ռազմավարական և օրենսդրական նախաձեռնությունների շուրջ աշխատանքների առնչությամբ առկա է ամենօրյա աշխատանքային կապ ՀՀ ազգային ժողովի ներկայացուցիչների հետ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ ոստիկանության գործունեության նկատմամբ ՀՀ ազգային ժողովի իրավասու հանձնաժողովի՝ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության շուրջ առկա են որոշակի ինստիտուցիոնալ խնդիրներ:

Մասնավորապես, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակման և քննարկման աշխատանքներում ՀՀ ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովի մասնակցությունը եղել է ոչ այդքան ակտիվ: Նշված պնդումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ համացանցում հասանելի աղբյուրներից պարզ է դառնում, որ օրենսդրական փոփոխությունների նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, և նախագծի մշակմանն օժանդակել են ոստիկանությունը, արտակարգ

իրավիճակների նախարարությունը, միգրացիոն ծառայությունը, ինչպես նաև միջազգային և քաղաքացիական հասարակության գործընկերները⁴ սակայն, ոչ ԱԺ-ն: Չնայած նշված հայտարարությանը, ՀՀ վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 06-ի [N 903-Ա որոշման](#) 1-ին հավելվածի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի անհատական կազմում ներառված է եղել նաև ՀՀ ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահը և վերջինիս տեղակալը (համաձայնությամբ): Այս հանգամանքն, իհարկե, ողջունելի է, սակայն այն չի կարող փոխարինել օրենքների մշակման գործում խորհրդարանի՝ որպես օրինաստեղծ մարմնի գործառույթներին:

ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի հանձնաժողովի գործունեության գնահատման համատեքստում խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ նշված նախագծերի նկատմամբ **գլխադասային հանձնաժողով է նշանակվել⁵ ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը⁶, ոչ թե ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը**: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեմատիկ մշտական հանձնաժողովների ստեղծման հիմնավորումներից մեկը պատգամավորների մասնագիտացումն ապահովելն է, խնդրահարույց է, որ քննարկվող կարևորագույն օրենսդրական փաթեթի ուսումնասիրության փուլում ՀՀ ազգային ժողովի մասնագիտացված հանձնաժողովը հանդես չի եկել որպես գլխադասային հանձնաժողով և չի իրականացրել գլխադասային հանձնաժողովի իրավասությունները, մասնավորապես չի կազմել եզրակացություն (որը հասանելի կլիներ լայն հանրությանը) և չի կազմակերպել կառավարության ներկայացուցչի մասնակցությամբ հրապարակային քննարկում իր նիստի շրջանակում: Ասվածը բնավ չի նշանակում, թե պնդում ենք, որ ՀՀ ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը աշխատանքներ չի տարել օրենսդրական փաթեթի առնչությամբ: Ընդհակառակը, 2022 թվականի դեկտեմբերի 16-ին Կառավարության նախաձեռնությամբ հրավիրված ՀՀ ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի [սղագրությունների](#) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հիմնական զեկուցող արդարադատության նախարարի տեղակալն իր ելույթում նշել է.

⁴ Տե՛ս ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 06-ի նիստի տեսաձայնագրությունը <https://www.youtube.com/watch?v=YcQVTMEgGH8> 2ր54վրկ

⁵ «[Ազգային ժողովի կանոնակարգ](#)» ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահը շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով:

⁶ Նշվածը հիմնավորվել է այն հանգամանքով, որ քննարկման է ներկայացվել «Կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու փաթեթը, որը պետական-իրավական հարցերի հանձնաժողովի իրավասության ոլորտն է:

«(...) ներքին գործերի նախարարության ձևավորմանն ուղղված փաթեթի մասով մենք հասցրել ենք ունենալ փակ քննարկում երկու հանձնաժողովների մասնակցությամբ՝ գլխադասային և պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի մասնակցությամբ և հասցրել ենք դետալային կերպով անդրադառնալ ներքին գործերի նախարարության ձևավորման սցենարին, այն բոլոր դետալներին, որոնք, ըստ էության, կհաջորդեն օրենսդրական փաթեթի ընդունմանը: Ըստ այդմ՝ հարգելի գործընկերներ, նշեմ, որ փաթեթում որոշակի խմբագրումներ կատարել ենք առաջինից երկրորդ ընթերցմամբ ռեժիմում, որոնք միտված են փաթեթն ավելի կատարելագործելուն և հնարավոր տեխնիկական թերությունները շտկելուն: (...)»:

Վերջինս նշված ելույթում նաև նշել է.

«(...) Առաջինից երկրորդ ընթերցման ռեժիմում Կառավարությունը, հաշվի առնելով փաթեթի լայնածավալ լինելը, խուսափել է բանավոր ընթացակարգով առաջարկներ ներկայացնելուց գլխադասային հանձնաժողովում, և բոլոր առաջարկները ներկայացված են եղել գրավոր առաջարկի տարբերակով, որպեսզի մեր գործընկերները հասցնեն նաև ծանոթանալ այդ առաջարկի իրացման ձևաչափին և, ըստ այդմ՝ հանձնաժողովում հնարավորություն ունենան՝ արտահայտելու իրենց կարծիքն արդեն խմբագրված տարբերակի մասով: (...)»:

Նշված նիստի ընթացքում ելույթ է ունեցել նաև ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը՝ նշելով.

«(...) այս փոփոխությունները քննարկվել են թե՛ հանձնաժողովի նիստում, թե՛ աշխատանքային քննարկումների ընթացքում, թե՛ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, որի իրավասության ոլորտում է գտնվում Կառավարության կառուցվածքի հետ կապված իրավահարաբերությունները և մանրամասն բովանդակային քննարկման են արժանացել նաև պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում, որտեղ վերհանվել են այն բովանդակային խնդիրները, որոնք անհրաժեշտ են այդ կառույցի առավել արդյունավետ գործունեությունն իրականացնելու համար: (...)»:

Վերը մեջբերված ելույթներից պարզ է դառնում, որ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը մասնակցել է օրենսդրական փաթեթի քննարկումներին, վերջինիս անդամների կողմից վեր են հանվել բովանդակային խնդիրներ և, դատելով ելույթներից, այդ նկատառումները հաշվի են առնվել և համապատասխան լրամշակումներ են կատարվել, **սակայն այդ ամենը**

հասանելի չէ լայն հանրությանը: Հանրությունը գրկված է հնարավորությունից ծանոթանալու և գնահատելու, թե խորհրդարանի՝ ոստիկանությանն առնչվող հարցերով մասնագիտացված մշտական հանձնաժողովն ինչ գնահատական է տվել օրենսդրական փոփոխությունների սկզբնական փաթեթին և ինչ խնդիրներ է մատնանշել՝ հաշվի առնելով իր թեմատիկ մասնագիտացումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հանձնաժողովն ունեցել է մասնակցություն օրենսդրական փաթեթի քննարկման գործընթացում, սակայն այդ մասնակցության ծավալը, բովանդակությունը և արդյունավետությունը հանրությունը գնահատելու հնարավորություն չունի: Այս առումով արձանագրում ենք, որ **ոստիկանության բարեփոխումների քաղաքականության, օրենսդրության մշակման խորհրդարանական վերահսկողությունը չունի բավարար հանրայնություն:**

Ցանկանում ենք նաև ընդգծել, եր [«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի](#) 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գլխադասային հանձնաժողովից բացի, մյուս մշտական հանձնաժողովները կարող են մինչև հարցի քննարկումն սկսվելը իրենց գրավոր եզրակացությունները ներկայացնել Ազգային ժողով: Այդ դեպքում մշտական հանձնաժողովի ներկայացուցիչն իրավունք ունի գլխադասային հանձնաժողովում, ինչպես նաև Ազգային ժողովում նախագծի քննարկման ընթացքում հանդես գալու հարակից զեկուցմամբ: Մինչդեռ, առկա չէ որևէ հրապարակային տեղեկություն առ այն, որ Պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովն օգտվել է այս հնարավորությունից և ներկայացրել է գրավոր եզրակացություն Ազգային ժողովին:

Ինչ վերաբերում է խմբակցությունների կողմից օրենսդրական փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկություններին, 2022 թվականի դեկտեմբերի 16-ին Կառավարության նախաձեռնությամբ հրավիրված ՀՀ ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի [սղագրությունների](#) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հիմնական զեկուցող արդարադատության նախարարի տեղակալն իր ելույթում նշել է. *«(...) Առաջինից երկրորդ ընթերցման ռեժիմում, հարգելի գործընկերներ, գրավոր առաջարկներ ստացել ենք «Հայաստան» խմբակցությունից, 4 առաջարկներ են ներկայացվել: Չորս առաջարկներից երեքը, ըստ էության նույնաբովանդակ են, նույն էությանն են վերաբերում և երեքն էլ հիմնական զեկուցողի՝ իմ կողմից չեն ընդունվել: (...)»*: Այսինքն, կարող ենք եզրակացնել, որ Ազգային ժողովի լիազուստ նիստում քննարկման արդյունքում մեկ խմբակցության կողմից ներկայացված ընդամենը մեկ առաջարկ է ընդունվել հիմնական զեկուցողի կողմից:

2) Քննիչ հանձնաժողովները

Խորհրդարանական կառավարման համակարգերում, որտեղ օրենսդիր և գործադիր իշխանությունները, որպես կանոն, նույն քաղաքական ուժն են ներկայացնում, քննիչ հանձնաժողովները գործնականում հանդես են գալիս, առաջին հերթին, որպես խորհրդարանական փոքրամասնության վերահսկողական գործիք: Քննիչ հանձնաժողովների ինստիտուտը Հայաստանի Հանրապետություն առաջին անգամ ներմուծվել է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 108-րդ հոդվածով, որտեղ մանրամասն ամրագրվել է քննիչ հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը: Մինչ այդ նախատեսված նմանատիպ մեխանիզմ էր ժամանակավոր հանձնաժողովը, որը համաձայն 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության, ստեղծվում էր Ազգային ժողովին որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին եզրակացություններ և տեղեկանքներ ներկայացնելու համար (հոդված 73): Սակայն նման հանձնաժողովների ձևավորման մեխանիզմը (մեծամասնության սկզբունքով), ինչպես նաև դրա գործունեության երաշխիքները բավարար չէին կարող լինել քննիչ հանձնաժողովների գործառույթները լիարժեք իրականացնելու համար՝ համեմատած 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված քննիչ հանձնաժողովների հետ:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է իրավունքի ուժով, եթե առկա է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջը: Իրավունքի ուժով ստեղծումը նշանակում է, որ քննիչ հանձնաժողովի ստեղծումը կախված չէ Ազգային ժողովի հայեցողությունից կամ չի պահանջում որևէ այլ հատուկ որոշման կայացում: Դրանով իսկ բացառվում է քննիչ հանձնաժողովի ստեղծման ճանապարհին հնարավոր խոչընդոտների հարուցումը՝ հաշվի առնելով, որ նման հանձնաժողովները հանդես են գալիս առավելապես որպես պառլամենտական փոքրամասնության գործիք: Մինևնույն ժամանակ, քննիչ հանձնաժողովի ստեղծման համար սահմանված ցածր շեմը միտված է ապահովելու վերահսկողական այս կարևոր գործիքից ակտիվորեն օգտվելու խորհրդարանական փոքրամասնության հնարավորությունը:⁷ ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն՝ քննիչ հանձնաժողով ձևավորելու համար անհրաժեշտ թվով պատգամավորները գրավոր դիմում են ներկայացնում Ազգային ժողովի նախագահին: Դիմումում պարտադիր նշվում է քննիչ հանձնաժողովի՝

- քննության առարկան և իրավասության ոլորտը,
- նախագահի անունը, ազգանունը,
- լիազորությունների ժամկետը (մաս 3),

⁷ Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում / Նորա Սարգսյան, Համլետ Ավետիսյան, Հովհաննես Օդարաշյան.- Եր.: «Լույս» հիմնադրամ, 2020, էջ 56

- դիմումին կցվում է քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը (մաս 4):

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասը հստակեցնում է խորհրդարանական քննիչ հանձնաժողովի սահմանադրաիրավական խնդիրն ու այն նպատակները, որոնց համար կարող են ստեղծվել քննիչ հանձնաժողովներ. նման հանձնաժողովը պետք է պարզի այնպիսի փաստեր, որոնք վերաբերում են նախ՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին, և երկրորդ՝ այդ հարցերը պետք է գտնվեն Ազգային ժողովի իրավասության ոլորտում: Քննիչ հանձնաժողովների քննության առարկան հստակորեն սահմանելը իրավական պետության պահանջ է, հակառակ դեպքում՝ քննիչ հանձնաժողովների գործունեությունը կարող է հանգեցնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի խախտման:

Ինչպես նշվեց, քննիչ հանձնաժողով ստեղծելու պահանջում պետք է նշվեն հանձնաժողովի քննության առարկան և իրավասության ոլորտը, նախագահի անունը և ազգանունը, հանձնաժողովի լիազորությունների ժամկետը և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Նշված փաստաթղթերի առկայության դեպքում ԱԺ նախագահը հաստատում է դիմումը ու ընդգրկում ԱԺ օրակարգ՝ ԱԺ-ի հաստատման համար: Այդուհանդերձ, **ձայների պարզ մեծամասնությամբ ԱԺ-ն հաստատում կամ մերժում է քննիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին որոշման նախագիծը:** Ստացվում է, որ ԱԺ քաղաքական մեծամասնությունը կարող է արգելափակել հանձնաժողով ստեղծելու քաղաքական փոքրամասնության ցանկացած նախաձեռնություն, ու քաղաքական մեծամասնության այդ հնարավորությունը բացարձակ է, քանի որ օրենքը որևէ բացառություն չի սահմանում խորհրդարանական փոքրամասնության համար: Այլ կերպ ասած, խորհրդարանական փոքրամասնությունը որևէ հնարավորություն չունի ստեղծելու քննիչ հանձնաժողով, եթե դա չի ցանկանում խորհրդարանական մեծամասնությունը: Ըստ էության, նման ընթացակարգը ԱԺ քաղաքական մեծամասնությանը օժտում է քննիչ հանձնաժողով ստեղծելու նախաձեռնության նկատմամբ վետոյի իրավունքով: Նման պարագայում ԱԺ կանոնակարգի 20-րդ հոդվածի սահմանումը, որ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է «իրավունքի ուժով», խորհրդարանական փոքրամասնության համար դառնում է իմաստազուրկ:⁸

Ավելին, [«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի](#) 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել

⁸ Տե՛ս «Քննիչ հանձնաժողովների արդյունավետությունը խորհրդարանական վերահսկողության լույսի ներքո» հետազոտությունը, «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան ՀԿ, Երևան 2022 թ., էջ 19

միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով: Հաշվի առնելով, որ համաձայն [«Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ազգային ժողովի որոշման](#)՝ ուստիկանությունը՝ որպես գործունեության ոլորտ ընդգրկված է պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի իրավասության տիրույթում, կարելի է փաստել, որ ուստիկանությանն առնչվող հարցերով քննիչ հանձնաժողով կազմելու պահանջի համար գործում է առավել բարձր շեմ՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, և քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովը:

Նշված հանգամանքն էլ ավելի է բարդացնում խորհրդարանական փոքրամասնության համար առավելապես իրենց համար նախատեսված այս գործիքից օգտվելը: Հարկ է արձանագրել, որ **հաշվետու ժամանակաշրջանում (2020-2022 թթ.) ուստիկանությանը վերաբերող քննիչ հանձնաժողով ձևավորելու պահանջով պատգամավորները հանդես չեն եկել և նման հանձնաժողով չի կազմվել**՝ չնայած նրան, որ նշված ժամանակահատվածում եղել են ուստիկանության գործողությունների, հատկապես ոչ համաչափ ուժի կիրառման վերաբերյալ բազմաթիվ դեպքեր ու լայն հասարակական և խորհրդարանական քննարկումներ:

3) Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը

Սահմանադրության 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվելու և հարցերին պատասխանելու պարտականությունը վերաբերում է Կառավարության բոլոր անդամներին, այդ թվում՝ վարչապետին, ինչը համահունչ է խորհրդարանական կառավարման ձևի էությանը: ԱԺ կանոնակարգի 120-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին՝ յուրաքանչյուր հերթական նիստերի չորեքշաբթի օրվա վերջին, հիմնական նիստում (մաս 1): Պատգամավորների կողմից տրվող հարցերի բովանդակությանը որոշակի պահանջներ է ներկայացվում ԱԺ կանոնակարգի 120-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն պատգամավորների կողմից տրված հարցերից յուրաքանչյուրը պետք է վերաբերի կառավարության մեկ անդամի իրավասությանը վերապահված ոլորտին: Պատգամավորների կողմից հարցեր տալու և կառավարության անդամների կողմից դրանց պատասխանելու ընթացակարգը սահմանված է ԱԺ կանոնակարգի 57-րդ հոդվածով: Նշված

հողվածի 3-րդ մասի համաձայն՝ հարցերի համար հատկացվում է երկուական, իսկ հարցերին պատասխանելու համար՝ երեքական թույլ: Կողմերին նաև տրվում է արձագանքելու հնարավորություն՝ յուրաքանչյուրին մեկական թույլ: Գործող կարգավորումների համաձայն բանավոր հարցերը նախօրոք չեն հրապարակվում և հնչում են միանգամից՝ Ազգային ժողովի նիստի ժամանակ:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՆԳ նախարարը, հանդիսանալով Կառավարության անդամ, ներկայանում է Կառավարություն-Ազգային ժողով շաբաթական հարցուպատասխանին, ինչը աննախադեպ առաջընթաց է ոստիկանության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության իրականացման տեսանկյունից, քանի որ նախկինում պատգամավորները հնարավորություն չունեին հարցեր ուղղելու ոստիկանության գործունեության համար պատասխանատվություն կրող անձին:

4) Գրավոր հարցեր ուղղելը

Սահմանադրության 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է պատգամավորների՝ Կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու իրավունքը: Ի տարբերություն բանավոր հարցերի, որոնց պարագայում ինչպես հարցերը, այնպես էլ պատասխանները հնչում են Ազգային ժողովի նիստի ժամանակ՝ գրավոր հարցերի պատասխանները Ազգային ժողովի նիստում չեն ներկայացվում: Գրավոր հարցերի ձևաչափը առավել հարմար է լրացուցիչ ուսուսմասիրություն պահանջող և առավել համապարփակ տեղեկատվություն ստանալու համար: Պատգամավորների՝ Կառավարության անդամների գրավոր հարցեր ուղղելու իրավունքի իրացման ընթացակարգը ևս մանրամասն ներկայացված է ԱԺ կանոնակարգով: ԱԺ կանոնակարգի 119-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցն ստանալուց հետո՝ երեքշաբաթյա ժամկետում, վարչապետը կամ նրա համաձայնությամբ Կառավարության համապատասխան անդամը գրավոր պատասխանում է հարցին: Գրավոր հարցերի պատասխանները տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (հոդված 119, մաս 3):

Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի ուսուսմասիրության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում **ոստիկանության գործունեության վերաբերյալ պատգամավորների կողմից կառավարության անդամներին ուղղված գրավոր հարցերի պատասխաններ չեն գտնվել:** Հետևաբար, խորհրդարանական վերահսկողության այս գործիքը չի օգտագործվել, ինչը խնդրահարույց է:

5) Հարցապնդումները

2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ խմբակցությունները իրավունք ունեն գրավոր հարցապնդումներով դիմել կառավարության անդամներին: Հարցապնդումների հետ կապված մանրամասները կարգավորված են ԱԺ կանոնակարգի 121-րդ հոդվածում: Եվրոպայի Խորհուրդը իր մի շարք փաստաթղթերում արձանագրել է, որ հարցապնդումների ինստիտուտը և դրանց արդյունքում կառավարությանը անվստահություն հայտնելու մեխանիզմը պառլամենտական փոքրամասնությանը վերապահված կարևորագույն գործիք է:⁹

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին մասով կառավարության անդամներին հարցապնդումներով դիմելու իրավունքը Հայաստանի Հանրապետությունում վերապահված է միայն խմբակցություններին: Հարցապնդումների ինստիտուտի կարևորագույն տարբերակիչ հատկանիշը դրա հետ կապվող իրավական հետևանքն է: Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասը, այս առումով, նախատեսում է երկու իրավական հետևանքի հնարավորություն՝

- պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ.
- Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել՝ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին:

Հասանելի աղբյուրների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ **հաշվետու ժամանակաշրջանում Ազգային ժողովի խմբակցություններից որևէ մեկը հարցապնդմամբ հանդես չի եկել ոստիկանությանն առնչվող հարցերի շուրջ:**

6) Խորհրդարանական քննարկումներ հրատապ թեմաներով և խորհրդարանական լսումներ

Հրատապ թեմայով քննարկումների ինստիտուտը խորհրդարանական վերահսկողության մեկ այլ կարևոր գործիք է, ինչի պատճառով այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածում: Այս ինստիտուտը առաջին անգամ է նախատեսվում սահմանադրական մակարդակով՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ: Հոդվածը սահմանում է, որ հերթական նստաշրջանի նիստերի՝ շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով

⁹ Թիվ 1601 (2008) բանաձևը ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընթացակարգային ուղեցույցների մասին: [Resolution 1601 \(2008\) on Procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament](#), կետ 2.2.4.

քննարկումներ: Հրատապ քննարկում նախաձեռնելու համար նախատեսված պատգամավորների թիվը փաստում է, որ հրատապ թեմաներով քննարկումները, առաջին հերթին, խորհրդարանական փոքրամասնության գործիք են: Սահմանադրական նորմը նաև ընդգծում է, որ այս քննարկումները պետք է ծավալվեն հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Սակայն, բացի հասարակական հետաքրքրության պահանջից, նորմը հուշում է, որ քննարկման թեման պետք է լինի նաև հրատապ, այսինքն՝ խիստ կարևոր, անհետաձգելի:

Խորհրդարանական վերահսկողության այս գործիքի կիրառման վերաբերյալ նույնպես առկա չեն տվյալներ համացացում հասանելի աղբյուրներից: Նույնը հաստատել են նաև հարցազրույցների մասնակիցները:

Մինչդեռ, խորհրդարանական լուսիների ձևաչափով քննարկումների իրականացման առումով արդյունքներն ավելի ակտիվ են: Մասնավորապես, 2022 թվականի հուլիսի 12-ին Ազգային ժողովում տեղի են ունեցել Ներքին գործերի նախարարության ստեղծման վերաբերյալ [խորհրդարանական լուսիներ](#): Խորհրդարանական լուսիների ընթացքում պահպանվել է շահագրգիռ բոլոր անձանց մասնակցայնությունը և կարելի է գնահատել, որ խորհրդարանական լուսիները տեղի են ունեցել այն ֆունկցիոնալ խնդրի կատարման համար, որի համար նախատեսված են՝ հանդիսացել են հարթակ առաջարկվող փաթեթի համակողմանի քննարկման, կարծիքներ հնչեցնելու և պատասխանատուներին հարցեր ուղղելու համար: Այնուամենայնիվ, **հնարավոր չի եղել գտնել որևէ զեկույց/ամփոփագիր, որը կազմված կլիներ լուսիների իրականացումից հետո, կամփոփեր լուսիների ընթացքում հնչած կարծիքները և դրա արդյունքները՝** որպեսզի հնարավոր լիներ գնահատել իրականացված լուսիների արդյունավետությունը և առավել հաշվետու դարձնել պատասխանատուներին:

Հարկ է նաև արձանագրել, որ առկա են նաև դեպքեր, երբ լուսիներ հրավիրելու հասարակական պահանջի առկայության պարագայում խորհրդարանական լուսիներ հրավիրելու Սահմանադրությամբ լիազորված 16 մարմիններից¹⁰ որևէ մեկը չի նախաձեռնում նման լուսիներ: Մասնավորապես, խոսքը գնում է քաղաքացիական հասարակության անդամների կողմից նախաձեռնված [ստորագրահավաքի մասին](#), որով վերջիններս [պահանջում էին](#) Ներքին գործերի նախարարի մասնակցությամբ խորհրդարանական լուսիներ անցկացնել ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ: Նման հանրային արշավի առկայությունը պետք է որ ազդակ լիներ խորհրդարանական մարմինների համար

¹⁰ «ԱԺ կանոնակարգ» օրենքի 125-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանական լուսիներ կարող են հրավիրել Ազգային ժողովի նախագահը, մշտական հանձնաժողովները (Ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով օրենքի նախագծի առնչությամբ), ԱԺ խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին առնչվող հարցով:

խորհրդարանական լսումների անցկացման անհրաժեշտության վերաբերյալ և վերջիններս իրենք պետք է առավել նախաձեռնողականություն դրսևորեին այս հանրային պահանջը բավարարելու ուղղությամբ: Սակայն խորհրդարանական մարմինները չեն դրսևորել պրոակտիվ մոտեցում, որը վկայում է ոչ բավարար խորհրդարանական վերահսկողության մասին:

7) Ոչ ֆորմալ քննարկումներ

Ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ նկատելի է նաև ոչ ֆորմալ քննարկումների¹¹ անցկացման ձևաչափի կիրառելիությունը: Այս հանգամանքը ֆիքսվել է նաև Ազգային ժողովում մոնիտորինգ իրականացնող խմբի կողմից: Վերջիններս իրենց [գեկուլյցում](#) նշել են. «8-րդ գումարման խորհրդարանում կայուն պրակտիկայի է վերածվում մշտական հանձնաժողովների կամ խմբակցությունների կողմից պետական համապատասխան մարմինների ղեկավարների կամ պատասխանատուների, շահագրգիռ այլ շրջանակների ներգրավմամբ ոլորտային հիմնահարցերի քննարկման նպատակով հանդիպումներ հրավիրելը: Խորհրդարանն իր վերահսկողական գործառույթներում օրենսդրորեն չկարգավորված այս կառուցակարգը բազմիցս է կիրառել 2-րդ նստաշրջանում»:

Այս առնչությամբ մենք համաձայն ենք մոնիտորինգային խմբի այն դիտարկման հետ, որ «դրական է, որ ոչ ֆորմալ քննարկումներ կազմակերպելն ավելի դյուրին է, ինչն առավել մեծ հնարավորություն է տալիս՝ ազդելու հանրային-քաղաքական օրակարգի ձևավորման վրա: Սակայն նման քննարկումները, չապահովելով հանրային լուրջ մասնակցայնություն, նվազեցնում են ազդեցության ռեսուրսը: Եթե լսումների իմաստային կոմպոնենտներից մեկը, հետադարձ կապի ապահովումից բացի, նաև խորհրդարանական վերահսկողությունն է, ապա ոչ ֆորմալ քննարկումները, բացի խնդիրների հանրայնացումից, գործառնական էական նշանակություն չեն կարող ունենալ: Վերոնշյալ բացասական հետևանքից բխում է մեկ այլ՝ օրինաչափության վերածվող իրողություն. նախապատվությունը առավել դյուրին կազմակերպվող ոչ ֆորմալ քննարկումներին տալով՝ ԱԺ մշտական հանձնաժողովները լսումների ինստիտուտի կիրառելիությունը դարձնում են իմաստազուրկ»: Միանալով վերը նշված դիտարկմանը՝ մենք նույնպես պնդում ենք, որ որքան էլ ողջունելի է իշխանության տարբեր թևերի միջև մշտական աշխատանքային կապի առկայությունը, ոչ ֆորմալ քննարկումները երբեք չպետք է

¹¹ Նշված հղումներում ներկայացվում են ոչ ֆորմալ քննարկումների օրինակներ.
<https://www.armtimes.com/hy/article/258906>; <https://mia.gov.am/2023/08/08/%d5%a1%d5%aa/>;
<https://mia.gov.am/2023/11/30/%d6%84%d5%b6%d5%b6%d5%a1%d6%80%d5%af%d5%b8%d6%82%d5%b4-6/>

փոխարինեն հանձնաժողովային նիստերին, քանի որ այդպիսի քննարկումները չեն ապահովում այն հանրայնացվածությունը և ներկայացուցականությունը, որին միտված են խորհրդարանում քննարկումները:

Այս բաժինը եզրափակում ենք ոստիկանապետի նշանակմանն առնչվող մեկ դիտարկմամբ: Ներկայումս ոստիկանապետի նշանակումը ՆԳ նախարարի առաջարկությամբ իրականացվում է վարչապետի կողմից¹². ՆԳ նախարարն ունի բացարձակ հայեցողություն վարչապետին առաջարկություն ներկայացնելու հարցում: Գիտակցելով, որ Ազգային ժողովը, հավանություն տալով Կառավարության գործունեության ծրագրին¹³, էական դերակատարություն է ունենում, այդ թվում, ՆԳ նախարարի գործունեության ուղղության մշակման հարցում, այնուամենայնիվ, գտնում ենք, որ ոստիկանապետի ընտրությունն ամբողջությամբ Ազգային ժողովի վերահսկողական դաշտից դուրս թողնելը խնդրահարույց է: Մեր այս դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ ՆԳ նախարարը և ոստիկանապետը, գտնվելով ենթակայության հարաբերությունների մեջ, այնուամենայնիվ, ունեն կոնկրետ սահմանված ֆունկցիոնալ տարբերություններ¹⁴. ՆԳ նախարարը պատասխանատու է ոստիկանության ռազմավարության նշակման և վերահսկողության համար, իսկ ոստիկանապետը՝ ոստիկանության ամենօրյա աշխատանքի համար¹⁵: Ուստի, ոստիկանության ամենօրյա աշխատանքի համար պատասխանատու, անմիջական ղեկավարում իրականացնող պաշտոնատար անձի նշանակման գործընթացում Ազգային ժողովին ընդհանրապես չընդգրկելը խնդրահարույց է: Նշված խնդիրը կարող է լուծվել ՆԳ նախարարի հայեցողությունը որոշ չափով սահմանափակելու և հակակշռելու ճանապարհով: Օրինակ, ոստիկանապետի պաշտոնի թեկնածուն վարչապետին կարող է առաջարկել ոչ թե ՆԳ նախարարի միանձնյա որոշման հիման վրա, այլ կարող է ստեղծվել մասնագիտացված խորհուրդ (որի կազմում ընդգրկված կլինի նաև Ազգային ժողովի ներկայացուցիչ), որի կողմից վարչապետին կներկայացվի առաջարկություն ոստիկանության պետի թեկնածուի առնչությամբ:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ 2020-2022 թթ. ընթացքում ոստիկանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ապահովման հարցում կատարվել է կարևորագույն քայլ՝ ստեղծվել է Ներքին գործերի նախարարությունը, և ոստիկանությունը դարձել է խորհրդարանական վերահսկողության օբյեկտ: Այնուամենայնիվ, խորհրդարանական

¹² «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 13, մաս 2

¹³ Մահմանադրություն, հոդված 151

¹⁴ Այս մասին հարցազրույցում նշել է նաև ՆԳ նախարարի տեղակալ Ա. Մարգարյանը, տե՛ս <https://www.youtube.com/watch?v=VS8ywmn4gvI>, 10ր58վրկ

¹⁵ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 13, մաս 1

վերահսկողության ամբողջ ծավալով և արդյունավետ իրականացման ուղղությամբ դեռևս շատ աշխատանք կա կատարելու, որը մի կողմից պայմանավորված է պառլամենտարիզմի՝ որպես մշակույթի զարգացմամբ և ամրապնդմամբ, մյուս կողմից՝ Ներքին գործերի նախարարության՝ որպես պետական կառույցի նորաստեղծ լինելու, և ոստիկանության՝ շուրջ երկու տասնամյակ խորհրդարանական վերահսկողությունից ամբողջությամբ դուրս գտնվելու հետևանքով ինստիտուցիոնալ հիշողության և հաշվետվողականության բացակայությամբ, և եռանդուն աշխատանք պետք է տարվի ոստիկանությունում նոր մշակույթի ձևավորման ուղղությամբ:

- Առաջարկություններ

Հիմք ընդունելով վերոբերյալը՝ առաջարկում ենք ձեռնարկել հետևյալ միջոցները.

- ՀՀ ազգային ժողովի կողմից առավել ակտիվ և նախաձեռնողական մոտեցում ունենալ ոստիկանության բարեփոխումների շրջանակում և օգտնվել իրեն սահմանադրությամբ ընձեռնված վերահսկողական մեխանիզմներից՝ առանց խախտելու իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքը:
- ՀՀ ազգային ժողովի կողմից առավել հետևողականորեն պահանջել իրեն հաշվետու լինել իր կողմից նշված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի ընթացքի վերաբերյալ՝ սահմանելով արդյունքների մասին հետադարձ հաղորդման ընթացակարգ ու ժամկետ: Նման քայլը չի կարող համարվել իշխանությունների բաժանման սկզբունքի խախտում:
- Առավել հետևողական լինել խորհրդարանական լսումների և այլ ձևաչափերով քննարկումների արդյունքների փաստաթղթավորման և հաշվետվողականություն պահանջելու հարցում:
- Հաշվի առնելով իր ներկայացուցչական մանդատը՝ ՀՀ ազգային ժողովը պետք է առավել մեծ ուշադրություն դարձնի հասարակական հնչեղություն և քննարկման անհրաժեշտություն ունեցող խնդիրների նկատմամբ, և իր իսկ նախաձեռնությամբ հրավիրի խորհրդարանական լսումներ կամ այլ մեխանիզմով հանրային պահանջ և հետաքրքրություն ներկայացնող հարցերը բերի խորհրդարանական վերահսկողության դաշտ:
- ՀՀ ազգային ժողովի պատգամավորները և խմբակցությունները պետք է առավել հաճախ և ակտիվությամբ հանդես գան ոստիկանությանն առնչվող օրենսդրական նախաձեռնություններով:
- Անհրաժեշտ է խուսափել հանձնաժողովային նիստերը և քննարկումները ոչ ֆորմալ քննարկումներով փոխարինելուց:

- Անհրաժեշտ է նախաձեռնել Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքէջի բարելավում և արդիականացում՝ օգտագործման համար այն դարձնելով առավել դյուրին (որոնման ֆիլտրների օպտիմալացում, առանձին բաժինների և ենթաբաժինների տեսանելիության բարելավում և այլն):

Բ. Ոստիկանության ներգրավվածությունը քրեական դատավարությունում

- Ռազմավարական ծրագիրը

Ռազմավարական ծրագրով առաջարկվում է վերականգնել մինչև 2014 թվականը գոյություն ունեցող համակարգը, համաձայն որի ոստիկանության համակարգում առկա էր քննչական բաժին և ոստիկանությունը ուներ քրեական գործերով նախաքննություն իրականացնելու գործառույթ: Ըստ ռազմավարական ծրագրում ներկայացված հիմնավորումների՝ ոստիկանության կողմից քրեական գործերով նախաքննություն կատարելու լիազորությունը 2014 թվականին ամբողջությամբ փոխանցվեց նորակազմ քննչական կոմիտեին՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով, որ շարունակեն գործել նախաքննություն իրականացնող մյուս երեք քննչական մարմինները՝ Պետական եկամուտների կոմիտեն (հարկային ու մաքսային իրավախախտումների գործերով), Ազգային անվտանգության ծառայությունը (ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մի շարք հանցագործությունների վերաբերյալ գործերով) և Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) (օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց կողմից՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ կատարած հանցագործությունների, ինչպես նաև քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցագործությունների վերաբերյալ գործերով):¹⁶ Ըստ Ռազմավարական ծրագրի՝

¹⁶ 2021 թվականին ՀՔԾ-ն լուծարվել է, նույն թվականի հոկտեմբերի 23-ից գործում է Հակակոռուպցիոն կոմիտեն: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության իրավասությունը ՀՔԾ-ից փոխանցվել է Հակակառուպցիոն կոմիտեին: Հաշվի առնելով, որ ՀՔԾ-ում քննվող քրեական գործերի ճնշող մեծամասնությունը կոռուպցիոն բնույթ ունեն, դրանք փոխանցվել են Հակակոռուպցիոն կոմիտեին, ուստի՝ մնացյալ քիչ թվով քրեական գործերի քննության համար առանձին կառույցի պահպանումը նպատակահարմար չի համարվել: Բացի այդ խոշտանգման դեպքերը պաշտոնատար անձանց կողմից կատարվող և կոռուպցիոն բնույթ չունեցող հանցագործություններ են, իսկ դրանց քննությունն առավել արդյունավետ իրականացնել հնարավոր

քննչական մարմինների նման դասավորվածության պայմաններում ոստիկանության համակարգի ամբողջ ռեսուրսը դուրս է մնացել քրեական գործերի նախաքննության գործառնությունից, ինչը խնդրահարույց է պետության տրամադրության տակ եղած ռեսուրսների արդյունավետ կիրառման տեսանկյունից: Թեև Ռազմավարական ծրագրում հստակորեն չի նշվում, սակայն, ըստ երևույթին, ծրագրի հեղինակները նկատի են ունեցել, որ Քննչական կոմիտեն և մյուս քննչական մարմինները ծանրաբեռնված են շարունակաբար աճող հանցագործությունների մեծ քանակով ու ի վիճակի չեն պատշաճ արձագանքել դրանց՝ հատկացնելով բավականաչափ ռեսուրսներ այդ գործերով պատշաճ որակով ու անհրաժեշտ արագությամբ քննություն իրականացնելու համար: Այդ իսկ պատճառով ռազմավարական ծրագրում առաջարկվում է ուսումնասիրել ոստիկանությանը քրեադատավարական գործառնություններ տրամադրելու հնարավորության հարցը, մասնավորապես՝ երկարաժամկետ կտրվածքում ամբողջական կամ որոշ տեսակի գործերի դեպքում **ոստիկանությանը քրեական հետապնդում՝ նախաքննություն իրականացնելու գործառնությո՞վերապահելու հարցը**: Ի հավելումն, նույն համատեքստում առաջարկվում է ուսումնասիրել քրեական ոստիկանությունում **քննչական ու օպերատիվ ֆունկցիաների միավորմամբ դետեկտիվների ինստիտուտի ներդրման** հնարավորությունը, որի պայմաններում դետեկտիվները լիազորված են լինելու իրականացնել ամբողջական քննությունն առանձին հանցագործությունների դեպքերով՝ ապահովելով գործուն կապ մյուս քննչական մարմինների հետ:

Նախագծի հեղինակները միննույն ժամանակ որպես այլընտրանք առաջարկում են դիտարկել ոստիկանության ծառայողների կողմից գործող քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում **հետաքննությամբ** քրեական գործի ամբողջական քննություն իրականացնելու և դրա ընթացքը լուծելու հնարավորությունը: Այդ իմաստով, կախված բնույթից, վտանգավորության աստիճանից, ինչպես նաև միջամտության հրատապությունից, ռազմավարական ծրագրում առաջարկվում է ոստիկանության քննությանը հանձնել **ընտանեկան բռնության** և **ճանապարհատրանսպորտային դեպքերի** քննությունը, ինչպես նաև դիտարկել առավել նվազ հանրային վտանգավորություն ներկայացնող ոչ մեծ ծանրության այնպիսի հանցագործությունները ոստիկանության քննչական ենթակայությանը հանձնելու հնարավորությունը, ինչպիսիք են մարդու դեմ ուղղված հանցագործությունները, սեփականության դեմ ուղղված, մասնավորապես՝ գողության, խարդախության, յուրացման կամ վատնման հանցակազմերի առաջին մասերով նախատեսված հանցագործությունները:

Է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի կողմից, ուստի՝ խոշտանգման վերաբերյալ քրեական գործերը փոխանցվել են ԱԱԾ քննչական դեպարտամենտ:

- Ռազմավարական ծրագրի կատարումը

Ներկայումս ՆԳ նախարարության, կառավարության, ինչպես նաև այլ պետական և ոչ պետական մարմինների կողմից աշխատանքներ են իրականացվում ոստիկանության 2024-2026 թվականների ռազմավարություն կազմելու ուղղությամբ, սակայն արդեն իսկ ընթանում է 2024 թվականը, մինչդեռ նոր ռազմավարության մշակման աշխատանքներն ավարտին չեն հասցվել: Այս հանգամանքը խնդրահարույց է, քանի որ նոր ռազմավարությունը վերաբերելու է նաև ընթացիկ տարվան և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմավարությանը կից պետք է մշակվի նաև գործողությունների պլան, մեծ է հավանականությունը, որ իրականացվելիք միջոցառումների և աշխատանքների ժամկետները կկրճատվեն, ամբողջությամբ չեն իրականացվի, գուցե նաև ժամանակավրեպ կամ ուշացած լինեն:

Վերը նշված ռազմավարական ուղղությունների իրագործման նպատակով ռազմավարությանը կից գործողությունների պլանում նախատեսվել էին կոնկրետ միջոցառումներ. ոստիկանությունում դետեկտիվների ինստիտուտի ներդրումը, այդ թվում՝ քրեական դատավարության օրենսգրքում ոստիկանության՝ նախաքննություն իրականացնելու լիազորության սահմանումը, ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցումը և ծառայության նյութատեխնիկական ապահովումը: Նախատեսվել էր աշխատանքներն իրականացնել 2022 թվականի երկրորդ կիսամյակից մինչև 2023 թվականի վերջն ընկած ժամանակահատվածում, որոնց մասնակցելու էին նաև ՀՀ արդարադատության և ֆինանսների նախարարությունը, Գլխավոր դատախազությունը, Հատուկ քննչական ծառայությունը և Քննչական կոմիտեն: Նախատեսվել էր նաև իրականացնել Քրեական դատավարության օրենսգրքի փոփոխությունների նախագծերի հանրային քննարկում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախատեսվել էր նաև ոստիկանության կազմում ներդնել օպերատիվ և քննչական գործառույթներ իրականացնող ծառայողների առնվազն 50 հաստիք: Բացի այդ, նախատեսվել էր 2021 թվականի առաջին կիսամյակում ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացնել Պարեկային ծառայության հետաքննիչների¹⁷ վերապատրաստման մեկամսյա կուրս: Նույն ժամանակահատվածում նախատեսվել էր մշակել հանցագործությունների քննության մեթոդաբանություն, որի շրջանակներում կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն. հանցագործությունների

¹⁷ Հետաքննիչներ եզրը այստեղ պետք է հասկանալ նախկին քրեական դատավարության օրենսգրքի իմաստով, ըստ որի հետաքննիչները իրականացնում էին քրեական գործի նախնական քննություն, ունեին որոշակի անկախություն քրեական հետապնդման այլ մարմիններից: Ներկա օրենսդրությամբ հետաքննիչներ են համարվում միայն օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման աշխատակիցները:

քննության մեթոդաբանությունը քննարկվել է շահառուների հետ ու ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախատեսվել էր ներդնել խոշտանգումների մասին հաղորդումների ուղղորդող մեխանիզմներ, որի շրջանակներում կատարվել է խոշտանգումների մասին հաղորդումների ուղղորդող մեխանիզմների ներդրման նպատակահարմարությանն ուղղված ուսումնասիրություն և արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել և քննարկվել նաև համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծերը: Արդյունքում, այդ մեխանիզմներն ընդունվել են, որոնցով ներկայացվել է առնվազն 10 հաղորդում (առավել մարամասն ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր բաժնում):

Վերը նշված գործողությունների ծրագրերը մշակվել և դրանց իրագործումը նախատեսվել էր այնպիսի ժամանակահատվածում, երբ գործող Քրեական դատավարության օրենսգիրքն արդեն ամբողջությամբ մշակվել ու ներկայացվել էր հանրային քննարկման: Այդ ընթացքում իրականացվում էին տարբեր ձևաչափերով քննարկումներ դատավորների, քննիչների, դատախազների, փաստաբանների և այլ մասնագիտական խմբերի միջև՝ հաճախ միջազգային դոնոր կազմակերպությունների մասնակցությամբ ու ֆինանսավորմամբ: Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով սահմանվել էր քրեական դատավարության նոր ու այնպիսի համակարգ, որի շրջանակում բացառվում էր ոստիկանության կողմից հետաքննություն և նախաքննություն իրականացնելը, առավել ևս ոստիկանությունում քննչական ենթակայություն ստեղծելը: Նման ենթակայություն կարող էր ստեղծվել, եթե արմատապես փոխվեր ոչ միայն ընդունվելիք քրեական դատավարության օրենսգիրքը, այլև դրա հայեցակարգը՝ այդ թվում նաև հետաքննություն իրականացնելու մասով: **Մակայն նման նախադրյալներ ու հնարավորություններ 2020-2022 թվականների միջակայքում բացակայում էին:** Քրեական դատավարության օրենսգրքի ներկա հայեցակարգն ընդունվել է 2011 թվականին և ռազմավարական ծրագրի ընդունվելու պահի դրությամբ արդեն մոտ տասը տարի շարունակ այդ հայեցակարգի հիմքով մի կողմից իրականացվում էին շարունակական բարեփոխումներ (շարունակաբար փոփոխվում էր նախկին դատավարական օրենսգիրքը, ընդունվում էին ենթաօրենսդրական ակտեր, զարգանում էր դատական նախադեպը՝ նախագծի հայեցակարգի հիմքերի համաձայն), իսկ մյուս կողմից իրականացվում էին վերը նշված քննարկումները: Հետևաբար, **2020-2022 թվականների ընթացքում արդեն ակնհայտ էր, որ ընդունվելիք օրենսգրքում բացառվելու էր ոստիկանության համակարգում քննչական համակարգի, առավել ևս «քննչական ու օպերատիվ ֆունկցիաների միավորմամբ դետեկտիվների ինստիտուտի»** ներդրումը, ինչպես նաև ոստիկանությանը հետաքննություն իրականացնելու հնարավորություն տալը:

Բացի այդ, 2014 թվականից ի վեր Քննչական կոմիտեի ստեղծմամբ ՀՀ-ում մեկնարկել էր նախաքննությունը մեկ մարմնի կողմից իրականացնելու ռազմավարության կենսագործումը, որի համաձայն՝ հաջորդող տարիներին պետական կառավարման տարբեր մարմինների կազմում գործող քննչական մարմինները միավորվելու էին Քննչական կոմիտեին: Այդ գործընթացը կատարվեց և՛ ՊԵԿ, և՛ ԱԱԾ կազմերում գործող քննչական ստորաբաժանումների դեպքում: ԱԱԾ քննչական դեպարտամենտի գործառույթները դադարեցվել են և փոխանցվել ՀՀ քննչական կոմիտեին, որի հիման վրա Քննչական կոմիտեում ձևավորվել է Պետության, սահմանադրական կարգի հիմունքների, և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով քննության գլխավոր վարչություն: Այս ստորաբաժանմանն են փոխանցվել ԱԱԾ քննչական գլխավոր վարչության թվով 47 հաստիքները: Գլխավոր վարչության կազմում ձևավորվել է 4 վարչություն՝ յուրաքանչյուրը 9-ական անձնակազմով: Ըստ քննչական կոմիտեի կողմից հայտնած տեղեկատվության՝ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ հաստիքներն ամբողջությամբ համալրված չեն, ԱԱԾ քննչական դեպարտամենտում աշխատած 39 քննիչներից միայն 17 քննիչներ են տեղափոխվելու ցանկություն հայտնել:

ՊԵԿ նախաքննական մարմինը Քննչական կոմիտեին է միացել դրանից 1 տարի առաջ՝ 2023 թվականի հունվարի 1-ին: Այս դեպքում ևս ստորաբաժանման 55 հոգանոց անձնակազմը, որոնց թվում՝ 50 քննիչները, չի կրճատվել և ցանկացողները տեղափոխվել են Քննչական կոմիտեի նորաստեղծ ստորաբաժանում և ձևավորվել է Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների վարչություն: Փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկու մարմիններն էլ նույնաբնույթ գործեր են քննել, բացի այդ՝ ՊԵԿ-ի քննչական ստորաբաժանումն ունի գերատեսչական ենթակայություն, իսկ Կոմիտեն համարվում է անկախ պետական մարմին:

Ի մի բերելով վերը նշվածը՝ պետք է արձանագրել, որ 2020-2022թթ. ռազմավարական ծրագրում ոստիկանության համար քրեադատավարական գործառույթներ ամրագրելը ի սկզբանե եղել է ժամանակրեպ ու անիրագործելի:

Գուցե վերը նշվածով է պայմանավորված, որ ոստիկանության բարեփոխումների 2024-2026 թվականների ռազմավարության մշակման աշխատանքների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ նախորդ ռազմավարության հիմնական ուղղություններից մեկը ներկայացված ոստիկանության՝ քրեական դատավարությանը մասնակցելուն ուղղված աշխատանքներ առնվազն վերջին մեկ տարվա ընթացքում չեն իրականացվել և գալիք ռազմավարության շրջանակներում այս մոտեցումը տեղ չի գտնելու: Սա հաստատել են նաև ՆԳՆ իրավասու պաշտոնատար անձինք:¹⁸

¹⁸ Նշվածը հաստատվեց նաև սույն հետազոտության հեղինակների և ՆԳՆ Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետի և տեղակալի հետ

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հետաքննությունը որպես քրեական վարույթի փուլ առհասարակ վերացվեց, հետևաբար այս մասով դադարեցվեցին նաև ոստիկանության լիազորությունները և պարտականությունները որպես հետաքննության մարմին: Իսկ եթե օրենքում օգտագործվում է «հետաքննություն» կամ «հետաքննիչ» արտահայտությունները, դրանք այժմ վերագրվում են բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումներին ու դրանց աշխատակիցներին, որոնք ոստիկանության համակարգում շարունակում են պահպանվել: Այդ պարագայում ոստիկանությունը համագործակցում է քննչական մարմինների հետ՝ քննչական մարմիններից ստանալով հանձնարարություններ գաղտնի քննչական գործողություններ կամ օպերատիվ հետախուզական միջոցառումներ (ՕՀՄ) իրականացնելու համար: Մասնագետների գերակշիռ մասի կարծիքով՝ այս համակարգը արդարացնում է իրեն, թեև կան նաև խնդիրներ հետաքննչական մարմինների և քննչական մարմինների համագործակցության առումով:

Հատկանշական է, որ 2020-2022 թվականների ռազմավարությամբ ներկայացված հիմնավորումները ևս վկայում են վերը նշված գաղափարների կենսունակ չլինելու մասին: Օրինակ՝ նշվում է, որ քննչական մի քանի մարմինների առկայության պայմաններում ոստիկանության համակարգի ամբողջ ռեսուրսը դուրս է մնում քրեական գործերի նախաքննության գործառույթից, ինչը, բացի հանցավորության դեմ արդյունավետ պայքարի խնդրից, նաև խնդրահարույց է պետության տրամադրության տակ եղած ռեսուրսների արդյունավետ կիրառման տեսանկյունից: Այս մասով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ներկայումս մշակվող ռազմավարության վերաբերյալ ՆԳ նախարարությունը բազմիցս հայտարարել է, որ իրականացվող բարեխումբների հիմնական նպատակն է ստեղծել մի մարմին, որը զբաղվելու է բացառապես ոստիկանական գործառույթներով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոստիկանության ուսերին ծառայած հավելյալ, այլ մարմինների գործունեության տիրույթում գտնվող խնդիրները ոստիկանությանը թույլ չեն տալիս իրականացնել իր բուն պարտականությունները: Հետևաբար, հարց է առաջանում, թե ի՞նչու էր ռազմավարական ծրագրում ի սկզբանե ծագել ոստիկանության կազմում քննչական մարմին ստեղծելու գաղափարը, եթե միևնույն ժամանակ հիմնավորումներում նշվել էր, որ ռազմավարական ծրագրում նախատեսված միջոցառումների նպատակը ոստիկանությանն իրեն չվերաբերվող

2024 թվականի հունվարի 29-ին տեղի ունեցած քննարկման ընթացքում ստացված ՆԳՆ պաշտոնատար անձանց պարզաբանումներով: Վերջիններիս խոսքով՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի 2023 թվականի հունիսի 1-ին տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում «*ոստիկանության համար քրեադատավարական գործառույթների ամրագրման գաղափարն անհնարին է դարձել կյանքի կոչել*»:

խնդիրներից ազատելն ու զուտ ուստիկանական գործառույթների իրականացման վրա կենտրոնացումն էր:

Որպես գաղափարի շարունակություն՝ ռազմավարական ծրագրի հիմնավորման մեջ նաև նշվում էր, որ երկարաժամկետ կտրվածքով մյուս կարևոր հարցը քրեական ուստիկանությունում քննչական ու օպերատիվ ֆունկցիաների միավորմամբ դետեկտիվների ինստիտուտի ներդրումն էր լինելու, ովքեր լիազորված կլինեն ամբողջական քննություն իրականացնել առանձին հանցագործությունների դեպքերով, ինչպես նաև գործուն կապ կապահովեն մյուս քննչական մարմինների հետ: Նշվածի վերաբերյալ ՆԳՆ ներկայացուցիչները քննարկումների ընթացքում հայտնեցին, որ այն իրականություն դառնալու պարագայում նախատեսվում էր այդ գործառույթն իրականացնել ուստիկանության օպերատիվ բլոկի (Օպերատիվ-հետախուզական գործունեություն (ՕՀԳ) իրականացնող ստորաբաժանում) աշխատակիցներին ստեղծվելիք ստորաբաժանում փոխադրելու միջոցով, սակայն գործնականում դրանով որևէ խնդիր չէր լուծվի, քանի որ մասնագիտական առումով այդ անձինք պատրաստ չէին լինի այդ աշխատանքին, արդյունքում՝ կփոխվեր միայն հաստիքի անվանումը: Ըստ էության, 2020-2021 թվականների ընթացքում քննարկվել է ուստիկանության կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական և հետաքննական գործառույթները նոր, այն է՝ դետեկտիվների ինստիտուտով փոխարինելու գաղափարը: Այս կոնցեպտի շրջանակներում պետք է համակցվեին օպերատիվ և քննչական գործառույթները և դրանք իրականացվեին մեկ ծառայողի կողմից, ինչը կնպաստեր ապացույցների ավելի արագ և լիարժեք ձեռքբերմանն ու հավաքմանը, տաք հետքերով հանցագործության բացահայտմանը:

Ըստ մեկ այլ հիմնավորման՝ հաճախ ենթադրյալ հանցագործության մի շարք դեպքերի վերաբերյալ քննություն կատարելիս Քննչական կոմիտե փոխանցված գործերով քննիչը մեխանիկորեն կրկնում է նույն գործողությունները, որոնք մինչ այդ կատարվել են ուստիկանության հետաքննիչների կողմից՝ հետաքննության փուլում, այդ թվում՝ անձինք հավելյալ ստիպված են լինում ներկայանալու իրավապահ մարմին: Քրեական դատավարության գործող օրենսգրքի ներդրմամբ այս խնդիրը կարգավորվել է, քանի որ հետաքննությունը ներառվել է նախաքննության փուլում և որպես ինքնուրույն դատավարական փուլ այլևս գոյություն չունի: Հետևաբար, այն մտահոգությունը, որ նախկին հետաքննիչը Քննչական կոմիտեում կրկնում է նույն աշխատանքը, արդարացված է, սակայն գերակայում է այն ռազմավարական մոտեցումը, որ առավել կարևոր է ապահովել քրեական հետապնդումը հանրային վերահսկողության դաշտ բերելը և դրանով մարդու իրավունքների պաշտպանվածությունն ընդլայնելը, որոնք նոր Քրեական դատավարության օրենսգրքով լուծվել են հետաքննությունը ներմուծելով նախաքննության՝ քրեական դատավարության փուլում:

Մեկ այլ դեպքում նշվում է, որ ոստիկանության՝ քրեական դատավարությանը մասնակցության մոդելների ընտրության հարցը կարող է պայմանավորվել քննչական մարմինների քանակով և իրավապահ համակարգում դրանց դասավորվածությամբ: Մի դեպքում ոստիկանությունում կարող է վերականգնվել քննիչների գործառույթը և քննչական ստորաբաժանումը, ինչը իրավապահ դաշտում ևս մեկով կավելացնի նախաքննական մարմինների թիվը: Նման մոտեցումը տրամաբանորեն կշարունակի քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի այն տրամաբանությունը, որ քրեական գործերի քննության լիազորությամբ օժտված են լինելու միայն քննիչները: Այս հիմնավորումից հետևում է, որ դրա հեղինակները, քաջատեղյակ լինելով քրեական գործերի՝ քննիչի կողմից քննության ենթակա լինելու պահանջին, ցանկանալով այն շրջանցել՝ առաջարկում են ոստիկանության կազմում ստեղծել քննչական ստորաբաժանում այն հիմնավորմամբ, որ ոստիկանության՝ քրեական դատավարությանը մասնակցության մոդելների ընտրության հարցը կարող է պայմանավորվել քննչական մարմինների քանակով: Այս պարագայում ևս անտեսվում է շուրջ մեկ տասնամյակ ՀՀ-ում իրականացվող՝ նախաքննությունը մեկ մարմնի կողմից իրականացնելու ռազմավարական գաղափարը, որի շուրջ, ի դեպ, արդեն ձևավորվել է կոնսենսուս իրավակիրառողների կողմից:

Հավելենք, որ Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր, երկար տարիներ շարունակ ոստիկանությանն է վերապահված եղել թեթև և միջին ծանրության գործերի քննության իրականացումը, ինչը հանգեցրել է նաև համակարգային, ծավալուն կոռուպցիոն դրսևորումների: Օրինակ՝ ոստիկանության տարածքային բաժիններում պահվել են հաղորդումների գրանցման 2 մատյաններ, որոնցից մեկում գրանցվել են համեմատաբար նվազ հասարակական վտանգավորություն ունեցող հաղորդումները և շատ դեպքերում դրանց վերաբերյալ իրականացվող քրեական վարույթներին վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող դատախազները չեն տեղեկացվել և առհասարակ չեն իրականացրել հսկողական գործառույթ, իսկ հաղորդումների հիման վրա վարույթներ չեն հարուցվել, իսկ հարուցված վարույթները կարճվել են կոռուպցիոն դրսևորումների արդյունքում: Սա տարիներ շարունակ ահռելի կոռուպցիոն ռիսկեր պարունակող մութ, հանրային վերահսկողությունից դուրս գոտի էր, որը երկար ժամանակ հնարավորություն չէր լինում լուծել կոռուպցիայի կանխարգելման ավանդական գործիքներով: Դա այն հիմնական պատճառներից մեկն էր, որը հիմք հանդիսացավ հետաքննությունից հրաժարվելու համար, որն էլ իրականացվեց նոր Քրեական դատավարության օրենսգրքով:

Անհրաժեշտ է նշել, որ մասնագիտական շրջանակներում շարունակվում են քննարկումներն առ այն, որ հետաքննության փուլից հրաժարվելը առժամանակ էր,

քանի որ հետաքննության փուլը արդյունավետ ֆիլտր էր ընդունելու, մշակելու հանցագործության մասին արժանահավատ հաղորդումները ահռելի քանակությամբ անարժանահավատ, առերևույթ անհիմն կամ նվազ լրջության հանցագործությունների մասին հաղորդումներից, մինչդեռ ներկա պայմաններում այդ ամբողջ ծանրությունն ընկել է Քննչական կոմիտեի վրա, որը մեծ բեռ է և ազդում է կոմիտեի գործունեության արդյունավետության վրա: Քանի որ հնարավոր չէ վերականգնել հետաքննության փուլը, ռազմավարական ծրագրով առաջարկվում էր խնդրի շրջանցիկ լուծում՝ ուստիկանությանը հնարավորություն տալով իրականացնել ամբողջական քննություն ոչ մեծ ծանրության ու որոշակի տեսակի հանցագործություններով՝ այդպիսով բեռնաթափելով Քննչական կոմիտեին այդ մեծ քանակությամբ «աննշան» գործերի քննությունից: Չի կարելի ասել, որ նման պնդումներն ամբողջությամբ անհիմն են: Այդ առումով չի բացառվում, որ ապագայում կայացվի ռազմավարական որոշում վերադառնալու վերը նշված գաղափարին կամ 2020-2022 թվականների ռազմավարությամբ ներկայացված որոշ գաղափարների կենսագործմանը: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվեց վերևում, ներկա պայմաններում այն անհնարին է ու աննպատակահարմար:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրենք, որ թեև ի սկզբանե առաջ է քաշվել ուստիկանության՝ քրեական դատավարությանը մասնակցելու գաղափարը, վերջին նվազագույնը մեկ տարվա ընթացքում այս ուղղությամբ աշխատանքներ չեն տարվել: Այս գաղափարը չի ներառվելու ուստիկանության բարեփոխումների 2024-2026 թվականների ռազմավարության շրջանակներում: Ցանկանում ենք նաև կրկնել վերը նշված միտքն առ այն, որ **2020-2022 թվականների ռազմավարական ծրագրում ուստիկանությանը քրեական դատավարություն իրականացնելու գործառույթով օժտելու ռազմավարական առաջարկությունը ժամանակավրեպ էր ու անիրագործելի:**

Գ. Համայնքային ուստիկանության վերափմաստավորումը

- Ռազմավարական ծրագիրը

Ուստիկանության 2020-2022 թվականների բարեփոխումների ռազմավարությամբ սահմանված առաջնահերթ ուղղություններից մեկը համայնքային ուստիկանության վերափմաստավորումն է: ՆԳՆ-ի տեսլականի համաձայն՝ անհրաժեշտ է վերանայել համայնքային ուստիկանության գործառույթները (օրենսդրական և կառուցվածքային առումներով), որոնք հաճախ կրկնվում են, օրինակ, Պրոբացիայի ծառայության կամ սոցիալական ծառայությունների գործառույթները, ինչպես նաև, որ անհստակություն գոյություն

ունի այլ պետական մարմինների՝ քննչական մարմինների, զինվորական կոմիսարիատների հետ համագործակցության շրջանակներում իրականացվող գործառույթների մասով:

Վերը նշված գաղափարը կյանքի կոչելու նպատակով 2023 թվականի մարտ ամսից օրենսդրական նախագծերի ներկայացման e-draft.am էլեկտրոնային կայքում տեղադրվել են «Ոստիկանության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու [օրենքների նախագծերը](#):

Այդ նախագծերի ընդունման՝ ՆԳՆ-ի կողմից ներկայացրած հիմնավորման համաձայն՝ նախագծերի ընդունմամբ նախատեսվում է ներկայիս համայնքային ոստիկանության ու անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման ծառայության գործառույթները մեկտեղել ոստիկանության միևնույն ծառայողի գործառույթային պարտականությունների մեջ՝ վերջինիս օժտելով նաև ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքերով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացնելու լիազորությամբ: Այսպիսով, նախատեսվում է **համայնքային ոստիկանությունը վերածել բազմաֆունկցիոնալ ոստիկանության**, որը կնպաստի համայնքամետ գործունեության ամրապնդմանը:

Ռազմավարական ծրագրում բացասական գնահատական է տրվել համայնքային ոստիկանության զարգացման նախորդ տարիների ծրագրին՝ պատճառաբանելով, որ հստակ հայեցակարգի և հստակ գործողությունների ծրագրի բացակայության հետևանքով համայնքի և քաղաքացիների հետ սերտ գործընկերության ձևավորումը չի հաջողվել, և հանրության կողմից համայնքային ոստիկանությունը շարունակել է ընկալվել որպես վարչաիրավական հարկադրանք կիրառող, համայնքում սեփական խնդիրներ լուծող ևս մեկ պետական օղակ: Համայնքային ոստիկանությունը ծանրաբեռնվել է նաև այնպիսի գործառույթներով, որոնք կա՛մ կրկնում են Պրոբացիայի պետական ծառայության կամ սոցիալական ծառայությունների գործառույթները (օրինակ՝ թմրանյութերից կախվածություն ունեցող, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, թափառաշրջիկությամբ և մուրացկանությամբ զբաղվող անձանց հետ տարվող պրոֆիլակտիկ աշխատանքները), կա՛մ առհասարակ բնորոշ չեն ոստիկանությանը (օրինակ՝ դատական ծանուցագրերի հանձնումը): Նաև նշվել է, որ համայնքային ոստիկանության գործառույթները շատ հաճախ հատվում են համայնքային մակարդակում գործող անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման ծառայության նույնանման գործառույթների հետ, և առաջանում է գործառույթների որոշակի կրկնություն կամ փոխհատվելիություն, ինչն

էականորեն ազդում է աշխատանքների օպերատիվության ու արդյունավետության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման վրա:

Ներկայացված նախագծերով սահմանվել է կարգավորում, համաձայն որի համայնքային տեղամասերում ոստիկանությունն իրականացնելու է նաև ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների առնչությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ և՛ հանցագործությունների կանխման ու բացահայտման, և՛ ապացույցներ հավաքելու նպատակով: Առաջին երկուսն իրականացվելու են քրեական ոստիկանության հրահանգով, իսկ վերջինը՝ քրեական դատավարության շրջանակներում՝ քննչական մարմնի ցուցումով: Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների առնչությամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ապահովումը լինելու է ոչ միայն ընտանիքում բռնության դեպքերի առնչության համատեքստում, այլ նաև ՀՀ ներքին գործերի նախարարի կողմից հաստատված այլ դեպքերում:

Համայնքային տեղամասերի սպասարկումը նախատեսվում է իրականացնել գործընկերային ձևաչափով՝ երկու համայնքային ոստիկանների կողմից՝ ապահովելու համար փոխլրացման սկզբունքը և տեղամասի սպասարկման աշխատանքների անընդհատությունը, որի կարգավորումները կամրագրվեն ենթաօրենսդրական ակտերով: Փոփոխությունների վերջնարդյունքում ոստիկանության ներկայիս տարածքային բաժինները կվերակազմակերպվեն համայնքային ոստիկանության բաժինների և կգործեն Ոստիկանության Հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անմիջական ենթակայության ներքո՝ որպես դրա տարածքային ստորաբաժանումներ:

Ոստիկանության կառուցվածքի բարեփոխումների իրագործումից հետո մարզային մակարդակում ներկայացված կլինեն **Քրեական ոստիկանության, Պարեկային ծառայության և Ոստիկանության գվարդիայի** տարածքային ստորաբաժանումները, որոնք ուղղահայաց ենթարկվելու են իրենց գլխադասային ստորաբաժանումներին, իսկ համայնքային մակարդակում՝ համայնքային ոստիկանությունը, որը նույնպես ուղղահայաց կենթարկվի գլխադասային ծառայություն հանդիսացող Հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությանը:

- Ռազմավարական ծրագրի կատարումը

ԵԱՀԿ փորձագետ Լատրի Տաբուրի կողմից ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ 2023 թվականին հրապարակված գնահատականում առանձին բաժին է հատկացվել

բարեփոխումների թիրախային 6-րդ ուղղությանը՝ գործառույթյան իմաստով համայնքային ուստիկանության կայացմանը:

Ուստիկանության բարեփոխումների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի հիման վրա Ուստիկանությունը 2022 թվականին իրականացրել է համայնքային ուստիկանության ստորաբաժանումների աուդիտ: Աուդիտի եզրահանգումներն ընդգծել են երկու հիմնական կետ՝ **համայնքային ուստիկանության նկատմամբ միասնական կազմակերպական մոտեցման բացակայությունը** և ներկայիս համայնքային ուստիկանների գործառույթներն օպտիմալացնելու անհրաժեշտությունը: **Աուդիտի արդյունքների համաձայն՝ օպտիմալացումը ենթադրելու է հրաժարում մի շարք ուստիկանական բնույթ չկրող կոնկրետ գործառույթներից, որոնք ներկայումս օժանդակում են այլ կառույցների աշխատանքին:** Օրինակ՝ դատական ծանուցագրեր հանձնելը կամ սոցիալական միջամտության կարիք ունեցող անձանց նկատմամբ հսկողությունը:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ «ոչ ուստիկանական» համարվող գործառույթները ներկայումս էլ շարունակվում են իրականացվել ուստիկանության կողմից, որը հաստատվեց նաև ՆԳՆ ներկայացուցիչների հետ 2024 թվականի փետրվարի 13-ին տեղի ունեցած քննարկման ընթացքում: Ըստ ՆԳՆ ներկայացուցիչների հայտնած տվյալների՝ այդ գործառույթների՝ ուստիկանությունից բեռնաթափման աշխատանքները միայն վերջերս են մեկնարկել, պետական տարբեր մարմինների մասնակցությամբ տեղի ունեցած հանդիպման ընթացքում խնդիրը բարձրացվել է, ինչի կապակցությամբ մասնակիցների զգալի մասը տեղեկացրել է, որ ֆինանսական և կազմակերպչական խնդիրներով պայմանավորված պատկան մարմինների կողմից դրանց իրականացումը դեռևս հնարավոր չէ, և առաջին հերթին անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ: ՆԳՆ ներկայացուցիչները հայտնեցին նաև, որ խնդրի լուծման նպատակով շուտով միջգերատեսչական աշխատանքային խումբ է ձևավորվելու: Նախատեսվում է, որ խումբը սեղմ ժամկետներում ոչ ուստիկանական գործառույթները պատկան ստորաբաժանումների կողմից ստանձնելու և իրականացնելու նպատակով մշակելու և ներկայացնելու է օրենքների փոփոխությունների նախագծեր: ՆԳՆ-ն բանավոր կարգով արդեն դիմել է պատկան մարմիններին աշխատանքներին մասնակցելու նպատակով թեկնածուներ ներկայացնելու համար:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ արձանագրենք, որ **ՆԳ նախարարությանը** դեռևս չի հաջողվել ոչ ուստիկանական գործառույթները թոթափել ուստիկանությունից և փոխանցել այլ պետական մարմինների: Ուստիկանության ծառայությունը շարունակում է դեռևս սպասարկել այնպիսի ոչ ուստիկանական ծառայություններ, ինչպիսին են, օրինակ, դատական ծանուցագրերի հանձնումը, կալանավայրերից կամ տնային կալանքը կրելու հասցեներից քրեական

վարույթների քննության ընթացքում կալանավորված անձանց ուղեկցումը, զինվորական կոմիսարիատներին ցուցաբերվող աջակցությունը (հատկապես՝ վարժական հավաքների կազմակերպչական աշխատանքներին օժանդակությունը) և այլն:

ԵԱՀԿ կողմից պատվիրված՝ «Համայնքային ոստիկանության զարգացումը Հայաստանում՝ մարտահրավերները և հետագա ուղին» զեկույցում ներկայացված բացերի վերլուծությունը վկայում է, որ չնայած Հայաստանում ժամանակակից ոճի համայնքային ոստիկանություն ներդնելու տևական ջանքերին՝ ծառայության արդյունավետ գործառնականությանը խոչընդոտում են **իրականացման շրջանակի և հայեցակարգային** մակարդակում առկա կարևոր բացերը: Թեև Ռազմավարությամբ նախատեսված էր, որ համայնքային ոստիկանության գործառույթները կիրականացնի նորաստեղծ պարեկային ծառայությունը՝ բազմաֆունկցիոնալ ոստիկանության միջոցով, սակայն շահագրգիռ կողմերի հետ վերջին քննարկումները վկայում են, որ հետագա վերլուծության արդյունքում **Նախարարությունը հակված է պահել համայնքային ոստիկանությամբ զբաղվող առանձին կառույց:** Մի շարք օրենսդրական փոփոխություններ են քննարկվում՝ այս ծառայության գործառույթների շրջանակը հստակեցնելու համար: **Ըստ էության՝ սա չի կարող գնահատվել որպես ռազմավարական փոփոխություն, քանի որ համայնքային ոստիկանությունը ՀՀ-ում գոյություն ունի դեռևս 2006 թվականից:** Թեև համայնքային ոստիկանության՝ ներկայումս առաջարկվող իրավասությունները և պարտականություններն էականորեն տարբերվում են ավելի քան մեկ տասնամյակ գործող համայնքային ոստիկանությունից՝ կառավարությունը որոշել է, որ համայնքային ոստիկանությունը շարունակելու է **ինքնուրույն գոյություն ունենալ և վերջինիս գործառույթները պարեկային կամ որևէ այլ ոստիկանական ծառայության չեն փոխանցվի:**

ԵԱՀԿ փորձագետների կողմից ներքին աուդիտի և վերանայման արդյունքները վկայում են համայնքային ոստիկանության լիազորությունների շրջանակն ու գործառութային համակարգումը հստակեցնելու, ինչպես նաև այս ծառայությունը հնարավորինս արդյունավետ իրականացնելու համար ինստիտուցիոնալ լուծումներ սահմանելու անհրաժեշտության մասին: Դա պահանջում է Հայաստանի համայնքային ոստիկանության վերաբերյալ համապարփակ տեսլականի և հայեցակարգի առկայություն, որին կհաջորդի մանրամասն գործողությունների ծրագիր՝ ծառայությունը հասարակության ակնկալիքներին համապատասխան վերաիմաստավորելու համար: Քանի դեռ ընթացքի մեջ են ռազմավարական քաղաքականության նոր շրջանակի և համապատասխան օրենսդրության մշակման աշխատանքները, համայնքային ոստիկանության մասով էական փոփոխություններ դեռ տեսանելի չեն:

Չնայած այս մարտահրավերներին, հարցումների իրականացման արդյունքում գրեթե բոլոր հարցվածներն ընդգծել են, որ **նստիկանական ծառայությունում համայնքամետ մոտեցման որդեգրումը ճիշտ և նպատակահարմար ընտրություն է Հայաստանի պարագայում**: Պարզապես ժամանակ պետք կլինի, որպեսզի կազմակերպությունը լիարժեք հարմարվի և համապատասխանի այս մոտեցմանը: Համապատասխան ռազմավարական շրջանակի և իրագործելի գործողությունների ծրագրի մշակումը, որին կնպաստեն անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, ճանապարհ կհարթի այս ուղղությամբ:

ՆԳՆ Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետի և այլ աշխատակիցների հետ քննարկումների ընթացքում ՆԳՆ պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Ոստիկանության բարեփոխումների 2024-2026 թվականների ռազմավարությունը մշակվում է առավելապես ՆԳՆ-ում քաղաքացիական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց կողմից: Բացի այդ, թե՛ ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարությամբ և թե՛ գործողությունների ծրագրով՝ համայնքային ոստիկանության վերաբերյալ համապարփակ տեսլականի մշակում չի նախատեսվել: ՆԳՆ ներկայացուցիչների հայտնած տեղեկություններով ևս նման փաստաթղթի մշակում չի նախատեսվում: Համայնքային ոստիկանության վերաբերյալ կառավարության մոտեցումները տեղ են գտնվում հայեցակարգի և գործողությունների ծրագրի մեջ, որոնք արդեն իսկ կազմվել և ավարտուն տեսքի են բերվել: Ներկայումս այդ փաստաթղթերը գտնվում են ներքին շրջանառության փուլում, ուղարկվել են տարբեր նախարարություններ, որոնցից առաջարկներ ստանալուց, ամբողջացնելուց և այդ երկու նախագծերը կառավարության կողմից հաստատվելուց հետո դրանք կիրառարակվեն և հանրությունը դրանց ծանոթանալու հնարավորություն կստանա:

Հարցումների և հարցազրույցների արդյունքում ստացված պատասխաններից երևում է, որ ՆԳՆ համակարգում ձևավորվել է միասնական ռազմավարական մոտեցում, որ թե՛ համայնքային ոստիկանության, թե՛ ոստիկանական մյուս ծառայությունների կազմավորման հիմքում դրվում է այն գաղափարը, որ յուրաքանչյուր ծառայություն պետք է զբաղվի միայն ոստիկանությանը հատուկ գործառույթներով, և ծառայությունները ձերբազատվելու են այն գործառույթներից, որոնք տարիների ընթացքում դրվել են ոստիկանության ուսերին, սակայն իրենց բնույթով ոստիկանական չեն (դրանք շարադրված են վերևում): ՆԳՆ ներկայացուցիչների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ նկարագրված մոտեցման գաղափարը ոստիկանական յուրաքանչյուր ծառայության՝ միայն սեփական խնդիրների լուծման վրա կենտրոնանալու հնարավորության ապահովումն է:

Այս կոնցեպտը, սակայն, որոշակիորեն դիֆերսիֆիկացվում է, երբ կիրառվում է: Օրինակ, ձեռքարկված անձանց պարագայում, մասնավորապես՝ նրանց պահման վայրերում (ՁՊՎ-ներում) հսկողությունը և տվյալ անձանց առնչվող ուղեկցման և հարակից գործառույթները շարունակելու են իրականացվել ոստիկանության կողմից, իսկ կալանավորված անձանց դեպքում՝ ոչ: Ամենայն հավանականությամբ կալանավորված անձանց պարագայում այդ ծառայությունները կիրականացվեն ԱՆ պրոբացիայի ծառայության միջոցով, քանի որ կալանավորված անձանց վերաբերող գործողությունների պատասխանատուն հենց այդ ծառայությունն է: Հարցազրույցների ընթացքում ՆԳՆ ներկայացուցիչները նշել են, որ նախատեսվող փոփոխությունները որևէ կերպ չպետք է հանգեցնեն վերը նկարագրված գործառույթների իրականացման ժամանակավոր դադարեցմանը կամ ազդեն դրանց որակի վրա: Որքան էլ որ այդ գործառույթները ոստիկանական չեն, միևնույնն է դրանց կատարման պատասխանատուն պետությունն է, և նույնիսկ այն պարագայում, երբ որևէ մարմին թերանա դրանք կատարելիս, երևույթը կընկալվի որպես պետական ապարատի թերացում: Հետևաբար՝ Ոստիկանությունը պատրաստ է որոշ ժամանակ, անցումային փուլում, շարունակել իրականացնել ոչ ոստիկանական գործառույթներ, մինչև պատասխանատու մարմինների կողմից դրանք ինքնուրույն իրականացնելու նպատակով նյութաիրավական բազայի ստեղծումը:

ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայքում հրապարակվել են Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի [կիսամյակային և տարեկան հաշվետվություններ](#):¹⁹ 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի **7-րդ գլխի 1-ին գործողության՝ Հաղորդակցության արշավներ՝ ուղղված ՀՀ ոստիկանության միջազգային իմիջի ու նոր ոստիկանության կերպարի բարձրացմանը** վերաբերյալ [կատարողականը](#): Ըստ դրա, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության ղեկավարությունը ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԱԺ-ի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ մասնակցել է ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությանը վերաբերող մի շարք հանրային քննարկումների և տարբեր ՁԼՄ-ներով հեռարձակված հարցազրույցների, որոնց ընթացքում հանրությանը տեղեկություններ են ներկայացվել Նոր ոստիկանության տեսլականի վերաբերյալ, որի նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու

¹⁹ Կատարողականների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները, որոնք վկայակոչված են այստեղ և ստորև մի քանի պարբերություններում, հրապարակված են ու հասանելի են հետևյալ հղումով. [Բարեփոխումներ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ \(police.am\)](#)

տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի Ոստիկանության ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է:

Միաժամանակ, հանրությանը տեղեկություններ են ներկայացվել ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ համայնքային ոստիկանության վերախմաստավորման վերաբերյալ: Արձանագրենք, որ բարեփոխումների և համայնքային ոստիկանության վերախմաստավորման վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել են հիմնականում ՆԳՆ և ՆԳՆ ոստիկանության պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև սոցիալական ցանցերի և բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների կողմից տարածված հայտարարությունների միջոցով, որոնք հաճախ տեղ են գտել տարբեր ԶԼՄ-ների հրապարակումներում:

2020 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի **1-ին գլխի 1-ին գործողության՝ Ոստիկանության կրթահամալիրի մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների աուդիտի** վերաբերյալ կատարողականը: Ոստիկանության կրթահամալիրի պետի 2020 թվականի օգոստոսի 21-ի թիվ 309-Ա հրամանով ձևավորվել է Ոստիկանության կրթահամալիրի մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների աուդիտի հանձնաժողով: Նույն հրամանով հաստատվել են աուդիտի միջոցառումների ժամանակացույցը և շրջանակը: 2020 թվականի օգոստոսի 26-ի նիստում աուդիտի հանձնաժողովը որոշել է պետական կրթական չափորոշիչների և մասնագրերի (ուսումնասիրվող առարկաների տեխնիկական բնութագիր, օրինակ՝ յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված ժամաքանակը) գնահատման չափանիշները: Կրթական բոլոր չափորոշիչների աուդիտի եզրակացությունը վերջնականացվել ու ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և ի թիվս այլ առաջարկների ներկայացվել է նաև հետևյալը. փոփոխություն է կատարվել նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի հուլիսի 23-ի ՈՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1740-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու և միջին մասնագիտական կրթության 1032.01.5 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.01.5 «Ոստիկանության սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին՝ թիվ 380-Ն հրամանում, որով նոր խմբագրությամբ շարադրել միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկանության սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչը: Չափորոշիչի վրա հիմնված կրթական ծրագիրը պետք է ուղղված լինի **համայնքային ոստիկանության տեսուչի, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման տեսուչի**

պաշտոններին նշանակվելու համար մասնագետների պատրաստմանը՝ հիմնվելով առավելապես գործնական պարապմունքների միջոցով իրավիճակային ուսուցման մեթոդի կիրառման վրա:

2021 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 1-ին գլխի 5-րդ գործողության՝ Ոստիկանության կրթահամալիրի մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների աուդիտի վերաբերյալ կատարողականը: 2021 թվականի 2-րդ կիսամյակում՝ Ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնում, վերապատրաստման դասընթացներ են անցկացվել նաև համայնքային ոստիկանության բաժանմունքի պետերի համար:

Նույն թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է նաև ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 6-րդ գլխի 1-ին գործողության՝ Համայնքային ոստիկանության բաժանմունքների գործառույթային և օրենսդրական աուդիտի վերաբերյալ կատարողականը: Ոստիկանության կողմից, Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ սահմանած մոտեցումների համատեքստում, իրականացվել է համայնքային ոստիկանության կառուցվածքի գործառույթային և օրենսդրական աուդիտ: Աուդիտը բաղկացած է հետևյալ 4 մասերից՝

- *համայնքային ոստիկանության ստորաբաժանումների կողմից ներկայումս իրականացվող գործառույթների նկարագիր,*
- *համայնքային ոստիկանության գործող մոդելի վերաբերյալ դիտարկումներ,*
- *դիտարկման արդյունքում ոստիկանության կողմից ներկայացվող առաջարկություններ,*
- *ոստիկանության կողմից ներկայացվող առաջարկությունների վերաբերյալ շահագրգիռ պետական կառավարման մարմինների դիրքորոշումներ և դրանց վերաբերյալ Ոստիկանության նկատառումները:*

Վերը նշվածի ուղղությամբ իրականացվել է համայնքային ոստիկանության կառուցվածքի միջազգային համեմատական ուսումնասիրություն, մասնավորապես՝ ԵԱՀԿ և ՄԱԿ-ի փորձագետների մասնակցությամբ համայնքային ոստիկանության լավագույն փորձի փոխանակման նպատակով անցկացվել են առցանց աշխատանքային քննարկումներ, որոնց ընթացքում Ղազախստանի, Կանադայի, Էստոնիայի, Նորվեգիայի և Շվեդիայի փորձագետները ներկայացրել են իրենց երկրների փորձը՝ համայնքային ոստիկանության ոլորտում: Քննարկումների արդյունքներով նախատեսվում էր ՀՀ-ի կողմից ընտրել համայնքային ոստիկանության՝ Հայաստանի Հանրապետությանը համապատասխանող երկրների մոդելները, ինչպես նաև փորձագետները, որոնք աջակցություն կցուցաբերեն ծառայության բարեփոխման ընթացքում: ՆԳՆ ներկայացուցիչների

տրամադրադրած տեղեկությունների համաձայն՝ համայնքային ոստիկանության կոնցեպտը մշակվել է ոստիկանության և արդարադատության նախարարության կողմից: Ուսումնասիրվել են տարբեր երկրների մոդելները, սակայն համայնքային ոստիկանության ամբողջական մոդել չի ընդօրինակվել, տարբեր երկրների մոդելներից վերցվել են այն բաղադրիչները, որոնք ՀՀ-ում հնարավոր է արդյունավետորեն կիրառել, դրանց հիմնական մասը պատկանում է Մեծ Բրիտանիայում գործող համայնքային ոստիկանության մոդելին, ինչը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ՀՀ-ի համար մշակվող ոստիկանության մոդելի աշխատանքներում ներգրավված է եղել Մեծ Բրիտանիայում երկար տարիներ աշխատած ԵԱՀԿ փորձագետ: Մինչդեռ, օբյեկտիվորեն Մեծ Բրիտանիայի մոդելը կարող է չհամապատասխանել ՀՀ-ում համայնքային ոստիկանության օբյեկտիվ պահանջներին: Այս հարցի վերաբերյալ վերջնական որոշումը դեռ չի կայացվել:

Նույն թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 6-րդ գլխի 2-րդ գործողության՝ **Ոստիկանության պարեկային ծառայության կողմից համայնքային ոստիկանության գործառույթի իրականացման** վերաբերյալ կատարողականը: Ըստ հրապարակված տեղեկատվության՝ իրականացվել է Ոստիկանության պարեկային ծառայության կողմից համայնքային ոստիկանության գործառույթների իրականացման նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություն և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Համաձայն նշված ուսումնասիրության՝ հաշվի առնելով, որ.

- Պարեկային ծառայությունը ներկայումս ապահովում է ծածկվածություն հանրապետության միայն մի հատվածում և նման պայմաններում վերջինիս համայնքային ոստիկանության գործառույթների վերապահումը խնդրահարույց է միասնական և համակարգված գործունեություն ապահովելու և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից,
- դեռևս ընթացքի մեջ են ԵՄ ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ աջակցությամբ իրականացվող համայնքային ոստիկանության զարգացած ինստիտուտներ ունեցող երկրների առաջավոր փորձի ուսումնասիրությունները (հաշվի առնելով նաև համայնքային ոստիկանության բաժանմունքների գործառույթային և օրենսդրական աուդիտի արդյունքները), ուստի միայն նշված աշխատանքների ավարտից հետո հնարավոր կլինի համայնքային ոստիկանության որոշ գործառույթների իրականացումը վերապահել Պարեկային ծառայությանը:

Միաժամանակ հաշվի առնելով Պարեկային ծառայության գործունեության բնույթն ու փիլիսոփայությունը, այն է՝ համայնքամետ ծառայություն, պարեկների

ողջ աշխատանքը հիմնվում է համայնքի հետ համագործակցության տրամաբանության վրա: Վերջինս ակնհայտ է քաղաքացիների արձագանքներում ու Պարեկային ծառայության հանդեպ քաղաքացիների վստահության բարձրացման ու դրական արձագանքների մեջ: ՆԳՆ ներկայացուցիչների հայտնած տեղեկությունների համաձայն՝ պարեկային ծառայության և համայնքի միջև համագործակցությունը ենթադրում է պարեկների կողմից բակային տարածքներ մուտք գործելը և բնակիչների հետ շփումը: Սակայն, ի տարբերություն ՆԳՆ ներկայացուցիչների հայտնած տեղեկությունների՝ քաղաքացիական հասարակության անդամների կողմից վերջին ամիսներին զգալիորեն ավելանում է անհանգստությունն առ այն, որ պարեկային ծառայողները գնալով ավելի ու ավելի քիչ են մուտք գործում բակային տարածքներ, ինչը հանցավորության մակարդակի վրա բացասական ազդեցություն ունի: Ստացվում է, որ պարեկային ծառայության և համայնքի միջև համագործակցությունը ՆԳՆ-ի կողմից գնահատվում է միայն կամ առավելապես պարեկների կողմից բակային տարածքներ մուտք գործելով, ինչը գործնականում գրեթե բացակայում է:

Նույն թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է նաև ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի **7-րդ գլխի 3-րդ գործողության՝ բարեփոխումների գործընթացում միջազգային գործընկերների ներգրավումը ապահովելու** վերաբերյալ կատարողականը: Ըստ հրապարակված տեղեկատվության՝ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են իրականացվող բարեփոխումների շրջանակներում Ոստիկանության հետ համագործակցության հնարավորությունները: Մասնավորապես, 2021 թվականի փետրվարի 22-ին Ոստիկանությունում տեղի է ունեցել հանդիպում Ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների և ՄԱԿ, ԵԱՀԿ և ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների միջև՝ ՄԱԿ և ԵՄ կողմից նախաձեռնված՝ Ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների աջակցմանն ուղղված «Հաշվետու ինստիտուտներ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի կետերի մասնագիտական քննարկման նպատակով: Ծրագրի շրջանակներում **նախատեսված է աջակցություն ցուցաբերել** Ոստիկանության կրթական համակարգին, **համայնքային ոստիկանությանը**, մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացմանը և մի շարք այլ հարցերի: Հաշվետու ժամանակաշրջանում Ոստիկանությունը նաև համայնքային ոստիկանության ուղղությամբ սերտ համագործակցել է ԵԱՀԿ հետ «Հաշվետու ինստիտուտներ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Նույն թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է նաև ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 7-րդ գլխի 3-րդ գործողության՝ բարեփոխումների գործընթացում միջազգային գործընկերների ներգրավումը ապահովելու վերաբերյալ կատարողականը:²⁰ Ըստ հրապարակված տեղեկատվության՝ հաշվետու ժամանակահատվածում՝ Ոստիկանությունում ընթացող բարեփոխումների շրջանակներում, Ոստիկանությունը շարունակել է երկկողմ և բազմակողմ համագործակցությունն օտարերկրյա պետությունների ներքին գործերի նախարարությունների (ոստիկանությունների) և միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ հունվարի 25-ին ՀՀ կառավարության, դիվանագիտական համայնքի, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ մեկնարկել է «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագիրը, որի բաղադրիչ են կազմում նաև «Ոստիկանության բարեփոխումները»: Նախատեսվում է գործողություններ իրականացնել նաև համայնքային ոստիկանության ուղղությամբ:

Ամփոփում ու գնահատական

Ռազմավարական ծրագրի իրագործումը կատարվել է մասամբ: Դրական է այն հանգամանքը, որ 2022 թվականին Ոստիկանությունը իրականացրել է համայնքային ոստիկանության ստորաբաժանումների աուդիտ ու ստացել կոնկրետ եզրահանգումներ առ այն, որ բացակայում է համայնքային ոստիկանության նկատմամբ միասնական կազմակերպական մոտեցում և որ անհրաժեշտ է համայնքային ոստիկանների գործառույթների օպտիմալացում: Վերջինի իմաստով կայացվել է ռազմավարական որոշում, որ անհրաժեշտ է հրաժարվել մի շարք գործառույթներից, որոնք ոստիկանական բնույթ չեն կրում: Այս գործընթացը սկսված է, ընթացքի մեջ է, սակայն ավարտված չէ: Այս պահի դրությամբ համայնքային ոստիկանությունը դեռ շարունակում է իրականացնել այդ մի շարք ոչ ոստիկանական գործառույթները, սակայն դա ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ փոփոխություն կատարելու ռազմավարական որոշումն արդեն կայացվել է: Խանգարող հանգամանքներ են անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայությունը և կազմակերպչական հարցերում անհստակությունը: Սակայն դրական է այն, որ այդ խնդիրները լուծելու համար նախատեսվում է

²⁰ Այս կատարողականը վերաբերում է 2022 թվականին, իսկ վերևում նշված նույնաբովանդակ կատարողականը վերաբերում է 2021 թվականի 1-ին կիսամյակին:

կազմել միջգերատեսչական հանձնաժողով, որը մշակելու է նաև օրենսդրական փոփոխությունների նախագծեր:

Նկատվում է միջազգային գործընկերների հետ համագործակցության արդյունավետ գործընթացներ համայնքային ոստիկանության բարեփոխման ուղղությամբ: Առավել արդյունավետ է համագործակցությունը ԵԱՀԿ-ի հետ, քանի որ այն համակարգված ու շարունակական բնույթ է կրում:

Ռազմավարությամբ նախատեսված էր համայնքային ոստիկանության գործառույթներն իրականացնել բազմաֆունկցիոնալ ոստիկանության միջոցով: ՆԳՆ-ում կարծում են, որ համայնքային ոստիկանության ծառայությունը պետք է իրականացնել ինքնուրույն կերպով, և վերջինիս գործառույթները պարեկային կամ որևէ այլ ոստիկանական ծառայության չեն փոխանցվելու: Մինևույն ժամանակ որոշվել է ընդլայնել համայնքային ոստիկանության լիազորություններն ու սահմանել ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքերով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացնելու նոր լիազորություններ համայնքային ոստիկանների համար:

Դեռ ընթացքի մեջ են համայնքային ոստիկանի վերջնական տեսլականի մշակումը և հայեցակարգի կազմումը: Տեսլականը նախատեսված չի եղել նաև 2020-2022 թթ. բարեփոխումների ռազմավարությամբ, իսկ հստակորեն մշակված հայեցակարգի բացակայությունը խոչընդոտում է բարեփոխումների իրականացումը: Այս անորոշությունը նաև պայմանավորված է 2024-2026 թթ. ռազմավարության մշակման անավարտ լինելու հանգամանքով:

Դրական են բարեփոխումների թափանցիկության ու հաշվետվողականության ուղղությամբ միջոցառումները: Պարբերաբար հրապարակվել են 2020-2022 թթ. բարեփոխումների տարբեր աշխատանքների կատարողականների վերաբերյալ հաշվետվություններ ՆԳՆ-ի պաշտոնական կայքում:

- Առաջարկություններ

- Համակարգել և արագացնել ոչ ոստիկանական գործառույթների բեռնաթափման աշխատանքները: Մասնավորապես, անցումային ժամանակահատվածում այդ գործառույթների իրականացումը ոստիկանության կողմից շարունակելը փաստաթղթավորել և սահմանել կոնկրետ ժամկետներ առ այն, թե որ գործառույթը մինչև երբ ոստիկանությունը պետք է իրականացնի:
- Սահմանել համայնքային ոստիկանության ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատման վերջնաժամկետ, ինչպես նաև կազմել (փաստաթղթավորել) համայնքային ոստիկանության հստակեցված տեսլականը:

- Ավելացնել համայնքային ոստիկանության գործառնությունների վերաբերյալ վերապատրաստումների թիվը և դրանցում ներգրավել բոլոր օղակների ծառայողների՝ ապահովելով յուրաքանչյուր օղակի համամասնորեն ներկայացվածությունը:
- Իրականացնել վերապատրաստման ծրագրեր համայնքային ոստիկանների՝ քրեադատավարական գիտելիքները բարելավելու ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ վերջիններս իրականացնելու են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով ՕՀԳ:
- Մշակել նախնական և շարունակական իրավաբանական կրթության վերապատրաստումների ուսումնական մոդուլներ համայնքային ոստիկանների համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընտանեկան բռնության, զգայուն արդարադատության, կանանց և երեխաների հիմնական իրավունքներին առնչվող յուրահատկությունները և իրավական լուծումները:

Դ. Մարդու իրավունքներին վերաբերող զգայուն հարցերը

- Ռազմավարական ծրագիրը

Ռազմավարական ծրագրի՝ Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր գլխում նշվել է. *«Որպես իրավախախտների հետ շփման պետության առաջին օղակ՝ ոստիկանությունում պետք է բարելավել քրեաիրավական ու վարչաիրավական կարգով ներգրավվող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մասնավորապես՝ խոսքը խոշտանգումների կանխարգելման միջոցառումների, (...) ձեռքակալվածների պահման վայրերում բժշկական ծառայությունների ապահովման, (...) մասին է»:* Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցերի քննարկումն ուղղակիորեն կապված է ոստիկանության գվարդիայի ստեղծման հետ: 2023 թվականի ապրիլի 28-ին Եվրոպայի խորհրդի աջակցությամբ մեկնարկել է Ոստիկանության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը հռչակված ոստիկանության գվարդիայի ձևավորումը: Եվրոպայի խորհուրդը աշխատանքներին մասնակցելու է *«Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի*

վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակներում: Նույն օրը ՆԳՆ տեղակալ Ա. Սարգսյանն իր ելույթում Գվարդիայի ձևավորման գործընթացում կարևորել է ՄԻԵԴ վճիռների, հատկապես *«Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի»* գործով²¹ վճռի կատարումը երեք ուղղություններով՝ **օրենսդրական, գործառնական և իրազեկման:**

2023 թվականի նոյեմբերի 15-ին իրավական ակտերի նախագծերի հրապարկման պաշտոնական e-draft.am կայքում տեղադրվել է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերի հակիրճ բնութագրում նշվում է, որ «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը ուղղված է զուտ ոստիկանական ծառայության ստեղծմանը՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող նոր սպառազինությամբ ու վերապատրաստված անձնակազմով, որին կվերապահվեն.

- *հասարակական կարգի պահպանության*
- *հասարակական անվտանգության ապահովման,*
- *պետական շենքերի և կարևորագույն օբյեկտների պահպանության,*
- *պետական արարողակարգով նախատեսված պատվիրակությունների ուղեկցման,*
- *ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման,*
- *ու այլ գործառնություններ:*

Հիմնավորումների մեջ նշվում է, որ նախագծերի ընդունումը կնպաստի քաղաքացիների՝ հավաքներ անցկացնելու իրավունքի առավել արդյունավետ իրացմանը, ինչպես նաև հավաքների մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման ռիսկերի չեզոքացմանը: Ի հավելումն, նախագծերի ընդունումը պայմանավորված է նրանով, որ ներկայումս ոստիկանության գործերի խնդիրները, գործունեության իրավական հիմքերն ու սկզբունքներն առավելապես կանոնակարգված են «Ոստիկանության գործերի մասին» օրենքով, իսկ «Պաշտպանության մասին» օրենքը ոստիկանության գործերը դասում է «այլ գործերի» թվին, ինչի ուժով ոստիկանության գործերի ղեկավարման և կառավարման գործառնությունները խաղաղ ժամանակ օրենքով սահմանված կարգով

²¹ [*Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի*](#), թիվ 23086/08, 20/09/2018թ.: Վճիռը վերաբերում է ոստիկանների կողմից հանրահավաքը դադարեցնելիս անհամաչափ ուժի կիրառմանը, ինչպես նաև անմարդկային վերաբերմունքի փաստի մասին ոստիկանության, քննչական ու դատական մարմինների կողմից արդյունավետ հետաքննություն, նախաքննության ու դատական ստուգում չկատարելուն: Այս դատական գործը Նախարարների կոմիտի կատարողական վարույթում առաջնային գործ է, որն ընտրվել է այն պատճառով, որ վճիռը բարձրացնում է համակարգային բնույթի խնդիրներ: Նախարարների կոմիտեն համարում է, որ ՀՀ-ն դեռ ամբողջությամբ չի կատարել վճիռը, քանի որ չի վերացրել համակարգային խնդիրները, որոնք մատնանշվել են վճռի կատարման վարույթում:

իրականացնում է լիազոր մարմինը՝ ներքին գործերի նախարարությունը, իսկ ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ ոստիկանության գործերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո: Այլ գործերի մեջ ներառվելու հետևանքով ոստիկանության գործերի վրա տարածվում են նաև ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի և ՀՀ զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի դրույթները: Այս ամենից հետևում է, որ ինչպես ոստիկանության գործերը, այնպես էլ դրանց ծառայողներն ունեն երկակի կարգավիճակ, հետևաբար, այս ծառայությանը բնորոշ է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության գործառույթների գույակցումը: Նման հայեցակարգը ու կառուցվարգը չի բխում ոստիկանության ընդհանուր խնդիրներից:

«Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի նախագծով (այսուհետ սույն բաժնում՝ նաև Նախագիծ) անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ իրականացնել «Պաշտպանության մասին», «Հավաքների ազատության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքներում:

Ըստ առաջարկվող կարգավորման՝ «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքը սահմանելու է ոստիկանության գվարդիայի նոր կարգավիճակը, կառուցվածքը, ոստիկանության ընդհանուր գործառույթներից բխող նրա անմիջական գործառույթները, դրանց իրականացման կապակցությամբ ոստիկանության գվարդիայի ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ՝ նրանց կողմից ուժային միջոցներ կիրառելու դեպքերը, հիմքերը և համաչափության պայմանները, ինչպես նաև ոստիկանության գվարդիայի ծառայողների պատրաստման և վերապատրաստման առանձնահատկությունները: Օրենքի մակարդակով կնախատեսվեն այն հատուկ միջոցները, որոնք լիազորված են լինելու կիրառել ոստիկանության գվարդիայի ծառայողները օրենքով վերապահված խնդիրների և գործառույթների ապահովման շրջանակներում: Գվարդիայի ձևավորման և գործունեության կարգը, ինչպես նաև դրանում իրականացվող ծառայության, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները կարգավորվելու են բացառապես ոստիկանությանը վերաբերող օրենսդրությամբ և չեն գտնվելու ռազմական կամ զինվորական բնույթ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կանոնակարգման տիրույթում: Ոստիկանության գվարդիան լինելու է ՀՀ ոստիկանության կառուցվածքային միավոր՝ իր տարածքային և ոլորտային ստորաբաժանումներով և այլևս չի ներառվելու «այլ գործեր» օրենսդրական հասկացության մեջ:

- Ռազմավարական ծրագրի կատարումը

1) Ոստիկանության գվարդիայի ձևավորումը

ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայքում հրապարակվող Ոստիկանության բարեփոխումների մասին [կիսամյակային և տարեկան հաշվետվություններում](#) 2020 թվականի 1-ին կիսամյակի համար ոստիկանության գվարդիային վերաբերող բարեփոխումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ Ոստիկանության կրթահամալիրի պետի 2020 թվականի օգոստոսի 21-ի թիվ 309-Ս հրամանով ձևավորվել է Ոստիկանության կրթահամալիրի մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների աուդիտի հանձնաժողով, որը մշակել է կրթական չափորոշիչների աուդիտի եզրակացություն ու ներկայացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Դրանում առաջարկվել է **մշակել ազգային գվարդիայի ծառայողների եռամսյա վերապատրաստման ուսումնական և առարկայական թեմատիկ պլաններ:**

Ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի **7-րդ գլխի 3-րդ գործողության՝ բարեփոխումների գործընթացում միջազգային գործընկերների ներգրավումն ապահովելու** վերաբերյալ կատարողականի համաձայն՝ Ազգային գվարդիայի ձևավորման նպատակով Ոստիկանությունը դիմել է ՌԴ ազգային գվարդիայի գորքերի Դաշնային ծառայությանը՝ Ռոսգվարդիայի խնդիրների, կառուցվածքի, գործառույթների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության և մեթոդական ձեռնարկներ ստանալու նպատակով: Վերջիններիս ստացման ընթացքի կամ վերջնարդյունքի վերաբերյալ ՆԳՆ-ի կողմից տեղեկատվություն չի ներկայացվել:

2021 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի **4-րդ գլխի 3-րդ գործողության՝ Ազգային գվարդիայի վերապատրաստում՝ հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի տակտիկաների և վերլուծական կանխատեսման մասնագիտական հնարավորությամբ** վերաբերյալ կատարողականը: «Ազգային գվարդիայի ձևավորում» միջոցառումն ընդգրկվել է ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրում՝ «Ոստիկանության գորքերի կարգավիճակի վերանայում, խնդիրների և գործառույթների վերաիմաստավորում, Ոստիկանության գորքերի ծառայության կազմակերպչաիրավական նոր ձևի սահմանում» անվանմամբ, որով Ոստիկանության գորքերի վերապատրաստման ծրագրերի մշակման և հաստատման վերջանաժամկետ է սահմանվել 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Այս գործողության կատարողականի վերաբերյալ նույնաբովանդակ տեղեկություններ են ներկայացվել նախ հաջորդ՝ 2022 թվականի

ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ: Նախ նշենք, որ ըստ «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 27-րդ հոդվածի՝ գվարդիայի ծառայողներն անցնելու են նվազագույնը մեկամսյա հատուկ պատրաստության ծրագիր, որից հետո ծառայության նշանակվելու դեպքում՝ ամենամսյա նվազագույնը 80 ժամ տևողությամբ վերապատրաստում: Ըստ ՆԳՆ ներկայացուցիչների հայտնած տեղեկությունների՝ թե՛ պատրաստության, թե՛ վերապատրաստման ծրագրերը դեռևս մշակված չեն, իսկ այդ աշխատանքները մեկնարկվելու են «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի ընդունումից հետո միայն: Հետևաբար, սահմանված վերջնաժամկետները խախտվել են:

Ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 7-րդ գլխի 3-րդ գործողության՝ բարեփոխումների գործընթացում միջազգային գործընկերների ներգրավումը ապահովելու վերաբերյալ կատարողականի համաձայն՝ 2021 թվականի նոյեմբերի 3-ին Ոստիկանության շտաբի պետը Կիևում հանդիպել է Ուկրաինայի ներքին գործերի նախարարի տեղակալ տիկին Մերի Հակոբյանին, որը ներկայացրել է Ուկրաինայի ներքին գործերի նախարարությունում ընթացող բարեփոխումները, մասնավորապես՝ ազգային ոստիկանությունում, պարեկային ծառայությունում, ազգային գվարդիայում և այլ ոլորտներում:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կազմավորումը նախատեսող օրենքների նախագծերի փաթեթում ներառված է նաև «Ոստիկանության գործերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը: Վերջինս մի շարք փոփոխություններ է նախատեսում՝ պայմանավորված Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ: Հիշյալ նախագիծը 2022 թվականի դեկտեմբերի 9-ին ընդգրկվել է Ազգային Ժողովի նստաշրջանի օրակարգում և նույն օրն առաջին ընթերցմամբ ընդունվել, իսկ արդեն [դեկտեմբերի 16-ին երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունվել է](#)՝ ուժի մեջ մտնելով 2023 թվականի մարտի 15-ին՝ ՆԳՆ կանոնադրության ուժի մեջ մտնելու օրը:

2022 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է նաև ռազմավարությանը կից գործողությունների ծրագրի 4-րդ գլխի 3-րդ գործողության՝ Ազգային գվարդիայի վերապատրաստում՝ հասարակական կարգի պահպանության համար նախատեսված արդի տակտիկաների և վերլուծական կանխատեսման մասնագիտական հնարավորությամբ վերաբերյալ կատարողականը: Ըստ հրապարակված տեղեկատվության՝ Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված «Ազգային գվարդիայի ձևավորում» միջոցառումն ընդգրկվել է ՀՀ կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրում՝ «Ոստիկանության գործերի կարգավիճակի վերանայում, խնդիրների և գործառույթների վերաիմաստավորում, Ոստիկանության գործերի ծառայության

կազմակերպաիրավական նոր ձևի սահմանում» անվանմամբ, որով Ոստիկանության գորքերի վերապատրաստման ծրագրերի մշակման և հաստատման վերջանաժամկետ է սահմանվել 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: Այնուհետև ներկայացվում է գվարդիայի գործառույթների վերաբերյալ ՆԳՆ մոտեցումները: *Ստացվում է, որ ոչ միայն 2022, այլև՝ նախորդող 2 տարիների հաշվետվություններում այս գործողության կատարողականի վերաբերյալ ներկայացվում է գրեթե նույնաբովանդակ տեղեկատվություն: Այսինքն, Ոստիկանությունը 3 տարի շարունակ հայտնում է, որ նախատեսում է մինչև 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը մշակել և հաստատել Ոստիկանության գորքերի վերապատրաստման ծրագրերը, սակայն 2024 թվականի փետրվար ամսվա դրությամբ ակնհայտ է, որ այն ավարտելու համար դեռևս անհրաժեշտ է նվազագույնը 2-ից 3 ամիս:*

2023 թվականի դեկտեմբեր ամսին օրենսդրական նախագծերի պաշտոնական հրապարակման e-draft.am կայքում ներկայացվել է «*Ոստիկանության գվարդիայի մասին*» օրենքի նախագիծը: Նախագիծը մանրամասնորեն սահմանում է գվարդիայի գործունեության նպատակները և ոլորտները վարչաիրավական ու քրեաիրավական ոլորտներում, այլ մարմինների, օրինակ, ոստիկանության այլ կառուցվածքային ստորաբաժանումների և քրեական հետապնդման, քրեական վարույթ իրականացնող մարմինների հետ համագործակցության հիմքերը և ընթացակարգերը, հարկադրանք, հատուկ միջոցներ ու հրազեն կիրառելիս մարդու հիմնարար այլ իրավունքներին միջամտելիս մարդու իրավունքների պաշտպանությանը առնչվող կարևոր սկզբունքները, օրինակ՝ համաչափության, պիտանության, անհրաժեշտության և նվազագույնի սկզբունքները, վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքների երաշխիքները, ձեռքարկման հիմքերը և խախտումների դեմ երաշխիքները, և այլն: Իհարկե, հնարավոր չէ այստեղ շարադրել բոլոր նշված հիմքերը ու վերլուծել դրանք: Նախագծի ընդունվելու պարագայում պրակտիկայում այլ բոլոր նորմերը պետք է անցնեն ժամանակի քննություն, հնարավոր է, որ ծագեն այլ օրենքների հետ կոլիզիոն իրավիճակներ կամ սահմանադրականության խնդիրներ: Ներկա պահին հնարավոր չէ այդ ամենը ամբողջությամբ գնահատել, սակայն, առաջին հայացքից օրենքի նախագիծը բավականին ամբողջական է և պարունակում է մարդու իրավունքների վերաբերյալ կարևոր երաշխիքները:

Ինչ վերաբերում է այլ դրույթներին, ուշադրության է արժանի Նախագծով սահմանված օրենքի անցումային դրույթների 29-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, ըստ որի՝ մինչև ոստիկանության գվարդիայի ծառայող նշանակվելը ոստիկանության գորքերի զինծառայողները շարունակում են իրականացնել իրենց պարտականությունները և իրավունքները՝ հանդես գալով որպես ոստիկանության գորքերի զինծառայողներ: Ուղղակիորեն նշվում է, որ

նստիկանության գորքերի ծառայողները մեխանիկորեն նշանակվելու են նստիկանության գվարդիայի պաշտոններում: Նշված կարգավորումը ինդրահարույց է այն տեսանկյունից, որ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության ծրագրի տևողության նվազագույն ժամկետ է սահմանվում 1 ամիսը: Ստացվում է, որ շուրջ 1-ամսյա ծրագրի ընթացքում ծառայողները պետք է հասցնեն ձեռք բերել ոչ միայն ֆիզիկական, մարտավարամասնագիտական հմտություններ, այլև՝ գիտելիքների բավարար պաշար հավաքեն օրենքով սահմանված իրավական բարձր ստանդարտներն ապահովելու համար: Թեև 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսվում է, որ գվարդիայի ծառայողները յուրաքանչյուր տարի նվազագույնը 80 ժամ տևողությամբ վերապատրաստման ծրագրերի պետք է մասնակցեն, կարծում ենք, որ նման կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ ձևավորել օրենքի պահանջներն ամբողջությամբ բավարարող ծառայողներ: Պետք է նկատի ունենալ, որ գվարդիան համալրելու են առավելապես նստիկանության գորքերի ծառայողները, որոնք հատկապես մարդու իրավունքների ապահովման տեսանկյունից նստիկանության ամենախոցելի ծառայողներից են, ինչն իր հերթին պայմանավորված է նստիկանության գորքերի ներկայիս գործառույթներով:

Գվարդիայի կազմավորման աշխատանքների մեկնարկում ՆԳՆ տեղակալ Ա. Սարգսյանը հատուկ կարևորել է հատկապես «Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի» վճռով ներկայացված իրավական վերլուծությունների ինկորպորացումը գվարդիայի ամենօրյա ծառայությունում: Սա ևս վկայում է, որ ՆԳՆ-ն իրոք բավական բարձր ստանդարտ է սահմանել, սակայն ծառայողների պատրաստման այդչափ կարճ տևողությունն օբյեկտիվորեն կարող է արդյունավետ միջոց չլինել սահմանված նպատակին հասնելու համար: Կարծում ենք, որ **անհրաժեշտ է կա՛մ առավել երկարատև պատրաստման ծրագիր ներդնել կամ գվարդիայի հաստիքները համալրել նստիկանության գորքերի միայն ամբողջությամբ օրենքի պահանջները բավարարող ծառայողներով:**

Հարցեր է առաջացնում նաև օրենքի 5-րդ հոդվածը, որում թեև նշվում է, որ գվարդիան ունի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ, սակայն ոչ այդ հոդվածով, ոչ էլ այլ իրավական ակտով չի հստակեցվում, թե քանի ստորաբաժանումից է բաղկացած լինելու գվարդիան և արդյո՞ք ներկայացված է լինելու բոլոր մարզերում: Նույն հոդվածով նշվում է նաև, որ գվարդիայի թվաքանակը սահմանում է վարչապետը: Նման կարգավորման վերաբերյալ թե՛ օրենքում, թե՛ նախագծի հիմնավորումներում որևէ պարզաբանում չի ներկայացվում: Ըստ ՆԳՆ ներկայացուցիչների հայտնած տեղեկությունների՝ քանի որ Ոստիկանության ընդհանուր թվաքանակար հաստատում է վարչապետը, հետևաբար՝ առանձին նստիկանական ծառայության կազմը ևս վերջինիս կողմից է հաստատվում:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանվում է, որ հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս ոստիկանության գվարդիան լիազորված է քննել օրենքով իր իրավասությանը վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր, սակայն գվարդիայի քննությանը ենթակա գործերի շրջանակը չի հստակեցվում:

Ամփոփելով գվարդիայի վերաբերյալ սույն ենթաբաժինը, կարող ենք արձանագրել, որ գվարդիայի վերաբերյալ օրենսդրության մշակման ժամանակացույց չի նախանշվել, հետևաբար՝ դրա պահպանման վերաբերյալ եզրակացություն անել հնարավոր չէ, սակայն առանձին գործողության կատարման վերջնաժամկետի բաց թողնման վերաբերյալ եզրակացություն սույն բաժնում կատարվել է:

Նախագիծը տրամադրում է մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ կարևոր երաշխիքներ: Սակայն խնդրահարույց են գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության ծրագրի կարճ ժամկետները, ինչպես նաև վարչական իրավախախտումները քննելու գործերի անորոշ շրջանակը:

2) Խոշտանգումների կանխարգելման միջոցառումներ և ոստիկանության ՁՊՎ-ներում անձանց պահում

ՆԳՆ ներկայացուցիչների հետ իրականացված հանդիպման արդյունքում և վերջիններիս կողմից տրամադրած տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ որ առաջադրված խնդրի լուծման շրջանակներում որոշում է կայացվել ջանքերն նպատակաուղղել հետևյալ ուղղություններով.

- *հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ներկայացման մատչելիության ապահովմանն ուղղված շարունակական միջոցառումների իրականացմանն ու համապատասխան գործիքակազմերի ձևավորում.*
- *հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները սահմանված կարգով չհաշվառելու և ընթացք չտալու մասով առկա ռիսկերի չեզոքացում.*
- *իրավապահ մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության մակարդակի և քաղաքացիների իրազեկվածության բարձրացում:*

Հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների և ահազանգերի ընդունմանը և հաշվառմանն ուղղված ունիվերսալ հարթակ է գործարկված Օպերատիվ կառավարման կենտրոնը, որն անմիջապես արձագանքում է հանցագործությունների վերաբերյալ ահազանգերին՝ ձեռնարկելով իրավիճակից բխող անհրաժեշտ գործողություններ, միաժամանակ ահազանգը մուտքագրելով

հանցագործությունների գրանցման միասնական էլեկտրոնային համակարգ, ինչը բացառում է սահազանգի հաշվառումից դուրս մնալը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու ստորաբաժանումների կողմից ընթացք չտալը: Իրենց իրավունքների հանդեպ քաղաքացիների իրավագիտակցության բարձրացման նպատակով, հաշվետու ժամանակահատվածում, Ոստիկանության կողմից՝ ԵԱՀԿ աջակցությամբ, մշակվել են «Քրեական վարույթի շրջանակներում Ոստիկանություն կանչված, բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց համար» և «Վարչական իրավախախտման գործի շրջանակներում Ոստիկանություն բերված կամ ձերբակալված անձանց համար» իրազեկիչ տեղեկություններ ամփոփող թերթիկներ, որոնք մեծ քանակությամբ բաժանվել են քաղաքացիներին:

Արձանագրում ենք, որ Օպերատիվ կառավարման կենտրոնի գործարկումը կարևոր ձեռքբերում է հաղորդումների ընդունման և օպերատիվ արձագանքման ուղղությամբ:

Ոստիկանության բաժիններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը նվազեցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 26.12.2019 թ. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշման շրջանակներում Ոստիկանության թվով 21 ստորաբաժանումներում՝ մուտքերին և ելքերին, տեղադրվել են տեսահսկման համակարգեր և համակցվել գերատեսչական ցանցին:

Բացի այդ 2020 թվականի ընթացքում Ոստիկանության կրթահամալիրում «Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով» միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստվել են Ոստիկանության գլխավոր, ավագ և միջին խմբերի ընդհանուր թվով 85 ծառայողներ: Այս առումով կարևոր է ձևավորվելիք գվարդիայի ծառայողների կրթական ծրագրերում նմանատիպ վերապատրաստումների ներդրումը և շարունակակալության ապահովումը:

Միևնույն ժամանակ, կարևոր ձեռքբերում է ՀՀ արդարադատության նախարարությունը Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող (SIDA) և Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի ինստիտուտի (Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law) կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում մշակված «Ուժեղ ցավի տարրը խոշտանգման հասկացությունում» վերտառության գործնական ուղեցույցը: Ուղեցույցը ներկայացնում է ուժեղ ցավի կամ տառապանքի տարրի վերաբերյալ հեղինակավոր դատական պրակտիկայի և մեկնաբանության եզակի համադրություն՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով դրանց վերաբերյալ հայաստանյան իրավական համակարգին և պրակտիկային:

Միջազգային իրավունքում խոշտանգումների հայտնի սահմանումներին և արգելքներին ծանոթանալուց հետո ուղեցույցն իրավակիրառողին կծանոթացնի տարրի գնահատման հայեցակարգային չափանիշներին՝ կարևոր աղբյուրների և հեղինակավոր մարմինների ամբողջական հղումներով հանդերձ:

Բացի այդ, խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ անձանց բողոքների և պնդումների մասին քննությունն օպերատիվ, անաչառ, մանրակրկիտ և արդյունավետ կատարելու, դրա պատշաճ արագությունն ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի՝ 2020 թվականի հունիսի 15-ի 12/2(8)-20 թվականի գրությամբ ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին հանձնարարվել է նշված բողոքները և պնդումները (դատարանում ենթադրյալ խոշտանգման վերաբերյալ արված հայտարարությունները, դատավարական գործողությունների ընթացքում վարույթն իրականացնող մարմինն հասցեագրված դիմումներով, բողոքներով արված պնդումները) անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության իրավասու բաժին: Նշվածն էական առաջընթաց է, սակայն անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություններ տրամադրել, թե որքանով է սահմանված 24-ժամյա ժամկետը հնարավոր լինում պահպանել պրակտիկայում:

Ըստ ՆԳՆ ներկայացուցիչների տրամադրած տեղեկատվության՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումներին գրությամբ պատասխանելու կամ այլ կերպ անհետևանք թողնելու դեպքերը բացառելու հանգամանքին:

Նշվածով պայմանավորված՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2021 թվականի փետրվարի 26-ի նիստում ընդունված որոշմամբ դատախազներին հանձնարարվել է բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ հաղորդումներին գրությամբ պատասխանելու կամ այլ կերպ անհետևանք թողնելու դրսևորումները: Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ հաղորդում ստանալիս անմիջապես գործադրել բոլոր միջոցները՝ պարզելու համար հաղորդումներում շարադրված տվյալների իսկությունը և արժանահավատությունը: Միաժամանակ, հանձնարարվել է բացառել ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումների հիմնավորվածությունը գնահատելուն ուղղված միջոցների հապաղումը, իսկ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության՝ ընդհուպ դրանց նվազագույն հիմնավորվածության պայմաններում վարույթն իրականացնող մարմինների կողմից նյութերի նախապատրաստման ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու դեպքում մերժել այն՝ գրավոր ցուցում տալով քրեական գործ հարուցելու մասին: Այս առնչությամբ ևս, անհրաժեշտ է ներկայացվող հաշվետվություններում առավել առարկայական տեղեկատվություններ ներառել, թե որքանով է հնարավոր լինում ապահովել ենթադրյալ խոշտանգման կամ վատ

վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ հաղորդումներին գրությամբ պատասխանելու կամ այլ կերպ անհետևանք թողնելու դրսևորումների բացառումը:

Ողջունելի է ՀՀ ոստիկանության պետի 25.07.2022 թ. [թիվ 26-Լ հրամանի](#) ընդունումը, որով սահմանվում է մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումներում տեղադրված տեսագրող համակարգերի տեխնիկական բնութագրերը, տեսագրությունների պահպանման, օգտագործման կարգը, ինչպես նաև տեսագրմանն առցանց հետևելու, տեսագրություններին հասանելիություն ունեցող ոստիկանության ծառայողների շրջանակը: Նշված հրամաններով և կից հավելվածներով մանրամասն սահմանվում են տեսանկարահանող սարքերին վերաբերող հիմնական հարցերը, այնուամենայնիվ, ցանկանում ենք ուշադրությունը հրավիրել տեսանկարահանող սարքերում տեսագրությունների պահպանման ժամկետներին: Համաձայն նշված հրամանի՝ իրականացվող տեսագրություններն առցանց փոխանցվում են Ոստիկանության տվյալ ստորաբաժանումում գտնվող տեսագրող (MVR) սարքի հիշողություն և այնտեղ պահպանվում է երեք ամիս: Նշված ժամկետի ավարտից հետո տեսաձայնագրությունները վերացվում են ինքնաշխատ եղանակով: Կարծում ենք, որ սահմանված երեք ամիսը կարճ ժամանակահատված է նման էական նշանակություն ունեցող ապացույցների պահպանման համար և այն հարկ է վերանայել: Մեր այս պնդումը հիմնվում է քննիչների ծանրաբեռնվածության և նախաձեռնված քրեական վարույթների շատ հաճախ դանդաղ ընթացքի վրա, և այս համատեքստում երեք ամիսը շատ կարճ ժամանակահատված է, հատկապես այն դեպքերում, երբ հանցագործության հաղորդման հիման վրա վարույթ չի նախաձեռնվում և հաղորդում ներկայացնողը ստիպված է բողոքարկել վերադաս դատախազին կամ դատարան: Այս դեպքում ավելի քան ողջամիտ է պնդելը, որ երեք ամսում, գուցե այդպես էլ չհաջողվի վարույթ նախաձեռնել, որի շրջանակում էլ կպահանջվեն այդ տեսաձայնագրությունները, իսկ վերջիններս վերացնում են ինքնաշխատ եղանակով՝ օրացույցային ժամկետը լրանալուց հետո: Ուստի գտնում ենք, որ տեսաձայնագրման՝ որպես խոշտանգումների կանխարգելմանն ուղղված գործիքի արդյունավետությունը և հետագայում դրա ապացուցողական նշանակությունն էականորեն կախված են դրանց պահպանման ժամկետներից, որոնք կարիք ունեն վերանայման:

Այս առնչությամբ նաև անհրաժեշտ է քննարկել ոստիկանության՝ Ձերբակալված անձանց պահման վայրերում (այսուհետ՝ նաև ՁՊՎ) վնասվածքների արձանագրման և դրանց մասին իրավապահ մարմիններին հաղորդելու հետ կապված խնդիրները: Նշված հարցերն արձանագրվել են ՀՀ մարդու իրավունքների

պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի [2020](#), [2021](#), [2022](#) թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցով:

Ընդհանուր առմամբ, ՀՀ ՄԻՊ-ի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2022 թվականի գործունեության վերաբերյալ [տարեկան զեկույցում](#) հետևյալ դիտարկումներն են կատարվել ՁՊՎ-ներում պահվող անձանց առողջության իրավունքի պահպանման վերաբերյալ.

անհրաժեշտ է՝

- ՁՊՎ-ներում առանձնացնել բժշկական զննության և բժշկական օգնության համար նախատեսված վայրն այլ նպատակային նշանակություն ունեցող սենյակներից.
- ՁՊՎ-ների բուժզննության սենյակներն ապահովել լվացարանով և մշտական հոսող ջրով.
- ազատությունից զրկված անձանց տրամադրել դեղորայք միայն բժշկական զննության և ցուցման պարագայում՝ այդ մասին գրառումներ կատարելով համապատասխան մատյանում.
- կազմակերպել ՁՊՎ մուտք գործած յուրաքանչյուր անձի բժշկական զննությունը և դրա պատշաճ արձանագրումը (այդ թվում՝ բժշկական զննության իրականացման ժամը)՝ անկախ նրանց կողմից գանգատներ ներկայացնելու, զննության ենթարկվելու պահանջի կամ տեսանելի մարմնական վնասվածքների առկայության հանգամանքներից,
- մշակել Ոստիկանության ՁՊՎ-ներում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արձանագրման ձևաթղթեր և համապատասխան ուղեցույցներ.
- իրականացնել շտապ բժշկական օգնության ծառայության բժիշկների մասնագիտական վերապատրաստումներ՝ վնասվածքների պատշաճ արձանագրման վերաբերյալ:

Կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչների իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ կապված ՁՊՎ-ների մատյանների ոչ պատշաճ վարման հետ: Մասնավորապես, «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ որոշ դեպքերում «Ձերբակալման ամսաթիվը և ժամանակը» սյունակի ներքո արձանագրվել է ազատությունից զրկված անձի ձերբակալման օրը և ժամը, իսկ ՁՊՎ մուտքի ժամը չի նշվել կամ հակառակը: Արդյունքում, հնարավոր չի եղել պարզել, թե անձի ՁՊՎ մուտքից ուղքան ժամանակ հետո է իրականացվել վերջինիս բուժզննությունը: Այս պարագայում ազատությունից զրկված անձանց ՁՊՎ մուտքի մոտավոր տվյալները հնարավոր է եղել ստուգել միայն «Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության» գրանցամատյանի հետ համադրության արդյունքում: ՀՀ ՄԻՊ-ը նաև ընդգծել է վերոնշյալ զեկույցում,

որ «հաշվի առնելով անձնական ազատության իրավունքը և այն, որ ՁՊԿ-ն հանդիսանում է ազատությունից զրկման վայր՝ պետք է իրականացնել պատշաճ արձանագրում և փաստաթղթավորում ՁՊԿ ընդունվող բոլոր անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև շարժի և բժշկական զննության վերաբերյալ»:

2020-2022 թթ. ռազմավարությանը կից գործողությունների պլանում որպես ուղղություն առաձնացված է քրեական ոստիկանության զարգացումը, և որպես թիրախ նախանշվել է քրեական ոստիկանության առավել արդյունավետ ներգրավվածության միջոցով հանցագործությունների կանխման ու քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացումը: Նախատեսվել է ներդնել խոշտանգումների մասին հաղորդումների ուղղորդող մեխանիզմներ, որի շրջանակներում կատարվել է խոշտանգումների մասին հաղորդումների ուղղորդող մեխանիզմների ներդրման նպատակահարմարությանն ուղղված ուսումնասիրություն և արդյունքները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել և քննարկվել համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծերը: Արդյունքում, այդ մեխանիզմներն ընդունվել են, որոնցով ներկայացվել է առնվազն 10 հաղորդում:

Խոշտանգումների մասին հաղորդումների նոր ներդրված ուղղորդող մեխանիզմի վերաբերյալ որևէ հասանելի աղբյուրում տեղեկատվություն ներկայացված չէ, իսկ ՆԳՆ ներկայացուցիչների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Պարեկային ծառայությունն օժտվել է քաղաքացիներից տեղում հանցագործության վերաբերյալ հաղորդումներ ընդունելու և դրանք հանցագործությունների գրանցման միասնական էլեկտրոնային համակարգ մուտքագրելու կանոնադրական գործառնությունով, որպիսի լիազորություն և հնարավորություն Ճանապարհային ոստիկանությունը և պարեկապահակետային ծառայությունը նախկինում չեն ունեցել: Հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների և ահազանգերի ընդունմանը և հաշվառմանն ուղղված ունիվերսալ հարթակ է նաև Պարեկային ծառայությանը գույքահեռ գործարկված Օպերատիվ կառավարման կենտրոնը, որն անմիջապես արձագանքում է հանցագործությունների վերաբերյալ ահազանգերին, ձեռնարկելով իրավիճակից բխող անհրաժեշտ գործողություններ, միաժամանակ ահազանգը մուտքագրելով հանցագործությունների գրանցման միասնական էլեկտրոնային համակարգ, ինչը բացառում է ահազանգի հաշվառումից դուրս մնալը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու ստորաբաժանումների կողմից ընթացք չտալը: **Ներկայացված տեղեկություններն ակնհայտորեն վկայում են, որ Պարեկային ծառայության և ՕԿԿ-ի կողմից հաղորդումների ընդունումը վերաբերում է բոլոր տեսակի իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունմանը, սակայն դրանք որևէ կերպ չեն կարող**

դիտարկվել որպես խոշտանգումների մասին հաղորդումների ընդունման նոր և/կամ ավելի մատչելի ու արդյունավետ մեխանիզմներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրենք, որ չնայած նրան, որ հաշվետու ժամանակահատվածում քայլեր են ձեռնարկվել խոշտանգումների կանխարգելման (հիմնականում միջոցառումները արտահայտվել են տեսախցիկների տեղադրմամբ և վերապատրաստումների անցկացմամբ) և ՁՊՎ-ներում պահման պայմանների բարելավման ուղղությամբ՝ այնուամենայնիվ թե՛ տեխնիկական, թե՛ բովանդակային առումով դեռևս մեծ աշխատանք է հարկավոր կատարել այս ուղղությամբ ուստիկանությունում խոշտանգումների հնարավորինս կանխարգելման, ինչպես նաև արձանագրված առերևույթ դեպքերի պատշաճ և օպերատիվ քննության համար:

- Առաջարկություններ

Հաշվի առնելով վերոբերյալը՝ առաջարկում ենք ձեռնարկել հետևյալ միջոցները.

- վերանայել ուստիկանական բաժիններում տեղադրված տեսանկարահանող սարքերում տեսաձայնագրությունների պահպանման ժամկետները և առավել ողջամիտ ժամկետ սահմանել (օրինակ՝ վեց ամսից մինչև մեկ տարի).
- ապահովել ՁՊՎ-ներում բժիշկների (ոչ թե բուժքույրերի կամ սանիտարների) հասանելիությունը և մասնակցությունը ձերբակալված անձանց առողջական վիճակի գննության գործընթացում.
- մշակել Ոստիկանության ՁՊՎ-ներում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արձանագրման ձևաթղթեր և համապատասխան ուղեցույցներ.
- ուստիկանության ծառայողների պարտադիր կրթական ծրագրերում ներառել խոշտանգումների, վատ կամ նվաստացուցիչ վերաբերմունքի վերաբերյալ միջազգային ստանդարտների՝ հատկապես ԽԿԿ ստանդարտների վերաբերյալ դասընթացներ.
- նախատեսել խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման վերաբերյալ առավել հաշվետու և առարկայական տվյալների հրապարակման հնարավորություն: Մասնավորապես, առաջարկվում է կիսամյակային և/կամ տարեկան հաշվետվություններում հրապարակել վիճակագրական տվյալներ, թե հաշվետու ժամանակահատվածում ուստիկանության ծառայողների կողմից առերևույթ իրականացված խոշտանգման և/կամ վատ վերաբերմունքի քանի հաղորդում է ներկայացվել և քանիսն են անպատասխան կամ անհետևանք

մնացել: Ինչպես նաև առավել առարկայական ներկայացնել, թե ինչ քայլեր են ձեռնարկվել հաշվետու ժամանակահատվածում հաղորդումների ներկայացման մատչելիությունը բարելավելու ուղղությամբ:

Ե. Բարեվարքության համակարգը

- Ռազմավարական ծրագիրը

Ոստիկանության բարեփոխումների 2020-2022թթ. ռազմավարության մեջ առկա է անդրադարձ նաև ոստիկանության **բարեվարքության համակարգի** բարեփոխման վերաբերյալ: Ծրագրի գործառնական ամփոփագրում նշվում է, որ բարեփոխումների նպատակը, ի թիվս այլ նպատակների, նաև *«բարեվարք ու հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է»*: Ծրագիրն այնուհետև առաջարկում է բարեփոխման կոնկրետ ուղղություններ ու ոլորտներ: Այնքանով, որքանով դրանք վերաբերում են բարեվարքությանը, այդ ոլորտները հետևյալն են.

Առաջին, առաջարկվում է իրականացնել ոստիկանության ծառայողների պատրաստման ու շարունակական մասնագիտական վերապատրաստման համակարգի բարեփոխում՝ և՛ վերապատրաստման բովանդակության, և՛ մեթոդաբանության առումով: Ի դեպ, ոստիկանության ծառայողների վերապատրաստումը ներառված է ծրագրի առաջնահերթ ուղղությունների ցանկում, նշելով, որ լրջորեն պետք է վերանայել ոստիկանի բարոյահոգեբանական պատրաստման, ոստիկանության ծառայողի բարեվարքության ու հակակոռուպցիոն կրթություն ստանալու հարցերին՝ նպատակ ունենալով ոստիկանությունում ներգրավել հանցագործությունների նկատմամբ անհանդուրժողական, իրավունքների պաշտպանությանը զգայուն և հասարակության անվտանգության հարցերով մտահոգ, բարեվարք ու հարգարժան հանրային ծառայող ոստիկաններ: Ռազմավարական ծրագրում առանձին բաժնով ներկայացված է «նոր ոստիկանության նկարագրի»՝ որպես ծրագրային ինքնուրույն ուղղության մանրամասն նկարագիր: Այս ամենը անկասկած առնչվում է բարեվարքությանը և այդ առումով կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են բարեվարքության մասին ուսումնական ծրագրերի, կանոնագրքերի, ուղեցույցերի, հանրային իրազեկման ծրագրերի մշակումը և իրագործումը:

Երկրորդ ուղղությունը ոստիկանության գործունեության քաղաքականություն մշակող և իրականացնող, հաշվետվողականության ու քաղաքացիական

վերահսկողության մեխանիզմներ ունեցող գործադիր իշխանության մարմնի ստեղծումն է, որի շրջանակում առաջարկվում է նաև իրականացնել ոստիկանության ծառայության կառուցվածքային ու գործառնության վերանայում: Բարեվարքության իմաստով ռազմավարական այս ուղղությունը կարող է ներառել ՆԳՆ համակարգում կարգապահական պատասխանատվության մշտական կամ ժամանակավոր համակարգեր ստեղծելը կամ առկա ծառայողական քննության համակարգերը բարելավելը: Այս ամենը, իհարկե, անհրաժեշտ կլինի իրականացնել օրենսդրական և ենթօրենսդրական բազայի բարելավմամբ: Այս վերջինը առնչվում է նաև ռազմավարական բարեփոխման երրորդ ուղղության հետ, որն է օրենսդրական բազայի բարեփոխումը:

Երրորդ, գործառնական ամփոփագրում նշվում է նաև բարեփոխումների պլանավորման և իրականացման փուլում *մասնագիտացված շրջանակների հետ* հանրային երկխոսության անհրաժեշտության մասին: Ռազմավարական այս ուղղությունը բարեվարքության առնչությամբ կարող է դրսևորվել նրանում, որ տարբեր համակարգեր մշակելիս անհրաժեշտ կլինի համագործակցել Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի (այսուհետ՝ նաև ԿԿՀ), բարեվարքության համակարգեր ունեցող տարբեր պետական գերատեսչությունների հետ, որոնք արդեն կիրառում են իրենց սեփական բարեվարքության համակարգերը, ինչպես նաև հաշվի առնելով քաղաքացիական ծառայության բարեվարքության համակարգը, քանի որ ոստիկանության համակարգում մեծ թիվ են կազմում քաղաքացիական ծառայողները:

Չորրորդ, ռազմավարական ծրագրում առաջարկվում է բարեփոխումների ընթացքի և հարգանքի արժանի ոստիկանի նոր կերպարի մասին հանրությանը մատչելի ու ժամանակին տեղեկատվություն ներկայացնելու մասին ծրագրային ուղղություն: Սա առնչվում է բարեվարքությանը նրանով, որ բարեվարքության համակարգը պետք է ներառի հանրային իրազեկման ընթացակարգեր:

Այսպիսով, ռազմավարական ծրագրում առաջարկվում է ստեղծել ոստիկանի նոր կերպար, դա անել ոստիկանների վերապատրաստումով, ոստիկանության կամ ՆԳՆ նոր կառուցվածքային համակարգում, մասնագիտացված շրջանակների հետ շարունակական կապ պահպանվելով, հանրային լայն իրազեկումով և օրենսդրության անհրաժեշտ բարեփոխումներով: **Վերապատրաստումը և նոր ոստիկանի կերպարի կերտումը սահմանված են որպես առաջնահերթ ծրագրային ուղղություններ:**

- Ռազմավարական ծրագրի կատարումը

Ռազմավարական ծրագրի նշված կետերը կատարվել են անբավարար կերպով: Ներկայումս բացակայում է ոստիկանության բարեվարքության ժամանակակից

սկզբունքների վրա հիմնված ու ամբողջական համակարգ, որը կբավարարի ԿԿՀ-ի սահմանած չափանիշներին և միջազգային սկզբունքներին: Սկզբունքորեն, երկու տարվա ընթացքում, առանց ՆԳՆ նոր համակարգի ամբողջական կառուցվածք ունենալու, անհնարին կլիներ իրագործել ռազմավարական այն կետերը, որոնք նշված էին վերևում:

Ոստիկանության բարեվարքության ներկա համակարգը բաղկացած է [Ոստիկանությունում ծառայության մասին](#) օրենքի 39, 42 և 43-րդ հոդվածներից, որոնք սահմանում են էթիկայի և վարվելակերպի նորմեր, նույն օրենքի 15 և 60 հոդվածներից, որոնք սահմանում են ատեստավորման հիմքեր ու ընթացակարգեր, կառավարության [1 հունիսի 2023 թվականի N 892-Ն](#) որոշումից, որը սահմանում է ատեստավորման մանրամասն ընթացակարգեր ու հիմքեր, Ոստիկանության [կարգապահական կանոնագրքից](#), որն ընդունվել է 2005 թվականին և Ոստիկանության պետի թիվ 10-Լ հրամանով ընդունված [ՀՀ ոստիկանության ներքին կարգապահական կանոնները](#):

Ոստիկանության ծառայության մասին օրենքում նշված հոդվածները սահմանում են սահմանափակ թվով ու շրջանակով բարեվարքության էթիկական ու վարվելակերպի նորմեր: 39-րդ հոդվածը սահմանում է անհամատեղելիության մի քանի հիմքեր, (օրինակ, ձեռնարկատիրական գործունեությամբ, բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական բնույթի աշխատանքներից այլ վճարովի գործունեությամբ զբաղվելու արգելքները), նվերներ ընդունելու ու հավաքներ կազմակերպելու արգելքները, քաղաքական չեզոքության պահանջը: 42-րդ հոդվածը սահմանում է կարգապահական տույժերի տեսակները, ինչպես նաև վարվելակերպի մի քանի լայն ու իրավաբանորեն անորոշ սահմանումներ, օրինակ, ծառայողական դիրքը չարաշահելու, ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները սահմանազանցելու վերաբերյալ ընդհանուր բնույթի սահմանումներ: Նման ընդարձակ ձևակերպումները չեն կարող ապահովել իրավական որոշակիություն և հանդիսանալ կամայականությունների ու խախտումների դեմ լուրջ երաշխիքներ: 43-րդ հոդվածը սահմանում է կարգապահական տույժերը կիրառելու և հանելու ընթացակարգերի վերաբերյալ սահմանումներ, հետևաբար, դրանք բովանդակային նշանակություն չունեն, այդուհանդերձ՝ սահմանում են որոշ մանրամասն ընթացակարգեր:

Օրենսդրական ակտում նման սուղ և անորոշ ձևակերպումները էթիկայի ու վարվելակերպի մասին պետք է որ լրացվեին վարքագծի կանոնագրքով: Սակայն Ոստիկանության կարգապահական կանոնագրքում գերակայում են ընթացակարգային նորմերը, ու թեև 10-րդ հոդվածում սահմանված են էթիկայի սկզբունքներ, ընդհանուր առմամբ կանոնագիրքը չի կարող ոստիկանության ծառայողների համար վարքագծի՝ [էթիկայի](#) ու [վարվելակերպի](#) մանրամասն ու կանխատեսելի ուղեցույց հանդիսանալ:

Ընդհանուր առմամբ, ոստիկանության բարեվարքության համակարգում բացակայում են սահմանումներ էթիկական այնպիսի կարևոր ընդհանուր սկզբունքների մասին, ինչպիսին են հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեխղճությունը, օբյեկտիվությունը, որոնք բխում են Հանրային ծառայության մասին օրենքից ու սահմանված են որպես հանրային ծառայությունում բարեվարքության համընդհանուր սկզբունքներ: Ի հավելումն, կանոնագրքում բացակայում են նորմեր թափանցիկության ու հաշվետվողականության, շահերի բախման ու նվերների ընդունման արգելքների, հանրային միջոցներով ու սոցիալական ցանցերում հաղորդակցության կանոնների, ոչ հրապարակային ու պաշտոնեական տեղեկությունների, ինչպես նաև անձնական տվյալների հրապարակման սահմանափակումների, հանրային ռեսուրսների բարեխիղճ օգտագործման, քաղաքական չեզոքության, կոռուպցիայի դեպքերի վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու պարտականության, խտրականության արգելքի ու այլ կարևոր վարքագծային կարգավորումների մասին: Բացակայում են նաև վարքագծի խրախուսելի նորմերը, որոնք առաջարկվում են ԿԿՀ-ի տիպային կանոններում և, ընդհանուր առմամբ, միջազգային սկզբունքներում: Այս ամենի փոխարեն առկա կանոնագրքում սահմանված են գլխավորապես ծառայողական քննության ընթացակարգային նորմեր, օրինակ, դրույթներ վարույթի մասնակիցների, որոշում կայացնող մարմինների, վարույթի լեզվի, ծառայողական քննության պարզաբանման ենթակա հարցերի, ժամկետների ու այլ նորմեր ընթացակարգերի և վարույթային իրավունքների մասին: **Կանոնագիրքը առավելապես հիշեցնում է դատավարական օրենսգիրք, քան թե վարքագծի մանրամասն ուղեցույց:** Նման մոտեցումը չի համապատասխանում բարեվարքության համակարգի պահանջներին, քանի որ չի ապահովում վարքագծի պարզորոշ ուղեցույց: Կարևոր է նաև ընդգծելը, որ Կանոնագիրքը չունի արժեքանական հենք, ու որպես այդպիսին չի կարող ծառայել ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծմանը՝ ինչպես նշված է ռազմավարության մեջ: Այսպիսով, Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը պետք է ամբողջությամբ վերանայվի:

Ինչ վերաբերում է ատեստավորմանը, վերևում հիշատակված կարգավորող ակտերը (Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի 15 և 60 հոդվածները և ատեստավորման կարգի մասին կառավարության որոշումը՝ հիշատակված վերևում) չեն տրամադրում հիմքեր ատեստավորման ընթացքում բարեվարքության հարցին անդրադառնալու համար: Թեև կառավարության [N 892-Ն](#) որոշման 69-րդ կետում սահմանված է, որ հարցազրույցի ընթացքում ստուգվում է նաև ծառայողի բարեվարքությունը, հարցումները ցույց են տալիս, որ այս նորմը պրակտիկայում չի կիրառվում և բարեվարքությունը ատեստավորման ժամանակ ստուգման առարկա չի համարվում: Ատեստավորման կարգի 2-րդ կետի համաձայն՝ ատեստավորման

շրջանակներում ստուգվում է ոստիկանության ծառայողի ընդհանուր զարգացվածությունը, ֆիզիկական և կրակային պատրաստականության աստիճանը, մասնագիտական գիտելիքների իմացությունը: Դա արվում է տեստային առաջադրանքի, ստուգարքի և հարցազրույցի հիման վրա, և առաջադրված խնդիրները վերաբերում են մասնագիտական գիտելիքներին, այլ ոչ թե բարեվարքությանը: Օրինակ, ոստիկանի կողմից հայտարարագրում ներկայացված տվյալների անհամապատասխանությունը չի համարվում ատեստավորման համար վերաբերելի հարց, թեև օբյեկտիվորեն հայտարարագրերի հետ կապված խնդիրները բարեվարքության շրջանակի հարցեր են:²² Հետևաբար, որոշ վերապահումով կարելի է պնդել, որ **ատեստավորման ընթացակարգերը ներկա պրակտիկայի ուժով բարեվարքության համակարգի մաս չեն կազմում:**

Այդուհանդերձ, ծառայողական քննության ընթացակարգերը գործում են: Ըստ հրապարակված վիճակագրական տվյալների, ոստիկանների նկատմամբ հաճախ են հարուցվում ծառայողական կարգապահական վարույթներ: Օրինակ, 2021 թվականին հարուցվել են 1771 ծառայողական քննության վարույթներ, որոնց արդյունքում կարգապահական տույժի են ենթարկվել 587 ծառայող, որոնցից 449-ը ստացել են նկատողություն, 80-ը՝ խիստ նկատողություն, մեկ ծառայողի պաշտոնն իջեցվել է մեկ աստիճանով, 15 ծառայողի պաշտոնային դրույքաչափերն իջեցվել են երեք ամիս ժամկետով, մեկ ծառայողի կոչումը իջեցվել է մեկ աստիճանով, իսկ 41-ը ազատվել են ոստիկանությունում ծառայությունից²³: 2023 թ. ընթացքում ՆԳՆ ոստիկանությունում հրավիրվել է ոստիկանության կարգապահական հանձնաժողովի 5 նիստ, որոնց ընթացքում քննարկվել է ոստիկանության 26 ծառայողի վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների 25 նյութ: Քննարկման արդյունքներով՝ ոստիկանության 22 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր: Մասնավորապես, 2 ծառայողի հայտարարվել է «նկատողություն», 3 ծառայողի հայտարարվել է «խիստ նկատողություն», 2 ծառայողի պաշտոններն իջեցվել են մեկ աստիճանով, իսկ 15 ծառայող ազատվել է ՆԳՆ ոստիկանությունում ծառայությունից: Բացի այդ, 1 ծառայող ազատվել է

²² Այն հանգամանքը, որ ատեստավորման ընթացքում բարեվարքության ստուգում չի կատարվում հաստատվել է նաև Ներքին գործերի նախարարության խոսնակ Նարեկ Սարգսյանի կողմից, ով «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում [պնդել է](#), որ ատեստավորման ընթացքում ոստիկանության ծառայողների հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների դեպքում նախարարությունը դրանք ուսումնասիրելու գործառնությունից չունի, քանի որ ատեստավորման ընթացքում ստուգվում են միայն ոստիկանի՝ տվյալ պաշտոնին համապատասխանելիությունը: Իսկ եթե կան որոշակի հարցեր՝ կապված ծառայողի հայտարարագրի հետ, Ներքին գործերի նախարարությունն այս մասով չունի գործառնություն, և դրանով այլ կառույցներ են զբաղվում: Աղբյուր՝ <https://fip.am/23913>:

²³ Այս մասին հայտարարել է փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանը 18/03/2022 թ. ասուլիսին. տե՛ս «Առավոտ» օրաթերթի հրապարակումը հետևյալ հղմամբ. <https://armtimes.com/hy/article/233208>

կարգապահական պատասխանատվությունից, իսկ 3 ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննությունների նյութերի և դրանց արդյունքներով կազմված եզրակացությունների քննարկումը հետաձգվել է:²⁴

Կարգապահական (ծառայողական) վարույթները հարուցվել են Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի 39, 42 և 43-րդ հոդվածների հիմքերով և, ամենայն հավանականությամբ, Կարգապահական կանոնագրքի հիման վրա: Հաճախ են դեպքերը, երբ ծառայողական քննությունը կասեցվել է, քանի որ վարույթ իրականացնող մարմինը փաստերը ներկայացրել է քրեական հետապնդման մարմիններին հարցը քրեական վարույթի շրջանակում լուծելու համար՝ հաշվի առնելով ոստիկանի գործողություններում քրեական բնույթի հնարավոր արարքների առկայությունը: Նման դեպքերը առավել հաճախ վերաբերել են ոստիկանի կողմից հանրահավաքի մասնակցի նկատմամբ կամ այլ հանգամանքում անհամաչափ ուժ կիրառելուն:²⁵ Այդուհանդերձ, քանի որ որոշումները չեն հրապարակվում (հրապարակվում են միայն դրանց եզրափակիչ մասը), հնարավոր չէ հրապարակային եղանակով ծանոթանալ դրանց բովանդակության հետ ու անհրաժեշտ վերլուծություններ կատարել: Օրինակ, որոշումների հրապարակայնության դեպքում հնարավոր կլիներ կատարել բովանդակության վերաբերյալ եզրահանգումներ, մասնավորապես՝ արդյոք պահպանվել է համաչափության սկզբունքը, թե որ արարքների դեպքում չեն հարուցվել կարգապահական վարույթներ, իսկ որ արարքների դեպքում են կասեցվել կամ կարճվել վարույթները, կամ՝ գնահատական տալ, թե արդյոք որոշում կայացնող պաշտոնատար անձինք իրավաչափորեն են կիրառել կարգապահական կանոնագրքի կամ օրենքի նորմերը, արդյոք որոշումները կայացվել են պատժողական ուղղվածությամբ, թե արժեքանական հենքով, և այլն: **Կարգապահական պատասխանատվության մասին որոշումների չհրապարակելը լրջորեն խաթարում է հանրային վերահսկողությունը ծառայողական քննությունների նկատմամբ:**

Հրապարակային չեն նաև կարգապահական վարույթների ընթացքը և որոշումները կայացնելու փուլը: Հասկանալի է, որ անիմաստ է վարույթ հարուցելու, քննություն կատարելու նախնական փուլերը (օրինակ՝ ապացույցներ հավաքելու գործընթացը) իրականացնել հրապարակայնորեն: Մակայն որոշում կայացնելու փուլը պետք է ունենա հրապարակայնություն (բացառության կարգով դռնփակ նիստ անցկացնելու հնարավորությամբ)՝ հատկապես, եթե դա է պահանջում անձը,

²⁴ 2023 թ. ընթացքում ՆԳՆ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կատարած աշխատանքների վերաբերյալ [հրապարակում](#) :

²⁵ Տեղեկանք ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ: 2022 թվական: (ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում): Էջ 10, պարբ. 3:

ում նկատմամբ հարուցվել է վարույթը: Այդ իմաստով, հաշվի առնելով, որ կարգապահական/ծառայողական քննություններն ի վերջո վարչական վարույթներ են, **անհրաժեշտ է ընդլայնել վարչարարության տարրերը այս վարույթներում՝** առաջին հերթին ավելացնելով ու ընդլայնելով վարույթների հրապարակայնության և վարույթային իրավունքի տարրերը կարգապահական վարույթներով: Այս իմաստով պետք է նկատել, որ Կանոնագրքի 27-րդ հոդվածը սահմանում է արդյունավետ պաշտպանության իրավունքներ, սակայն հրապարակայնության բացակայությունը թույլ չի տալիս գնահատել, թե որքանով են այդ իրավունքները պրակտիկայում հարգվում:

Կանոնագիրքը սահմանում է, որ ծառայողական քննությունն իրականացվում է «ծառայողական քննություն իրականացնող անձի» կողմից, ով *«սահմանված ժամկետներում անցկացնում է լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ծառայողական քննություն՝ կատարված գործողություններին տալով համապատասխան փաստաթղթային ձևակերպում»* (հոդված 25(ա)): Կանոնագիրքն ունի բազմաթիվ դրույթներ, որոնցով մանրամասնորեն սահմանվում են ծառայողական քննություն իրականացնող անձի լիազորությունները, ով ունի ամբողջական քննություն կատարելու և որոշում կայացնելու լիազորություններ: Այս ընդհանուր լույսի ներքո անորոշ է, թե որոնք են կարգապահական հանձնաժողովի լիազորությունները: Կարգապահական հանձնաժողովի մասին Կանոնագրքում այդ մասին անդրադարձ է արվում շատ համառոտ ու աղոտ կերպով՝ 43.1 հոդվածում՝ սահմանելով, որ կարգապահական կոպիտ խախտումների առթիվ իրականացված ծառայողական քննության նյութերը, դրա արդյունքներով կազմված եզրակացությունը մինչև համապատասխան որոշում ընդունելու համար ծառայողական քննություն նշանակող անձին ներկայացնելը կարող են քննության առնվել կարգապահական հանձնաժողովում: Ստացվում է, որ ծառայողական քննություններն հիմնականում իրականացվում են միանձնյա՝ ծառայողական քննություն իրականացնող անձի կողմից, ում լիազորությունները սահմանված են լայնորեն (տասնյակ դրույթներում), իսկ **կարգապահական կոպիտ խախտումների դեպքերով գործերը** քննվում են հանձնաժողովի կողմից, որի լիազորությունների մասին կանոնագիրքը հստակորեն չի սահմանում, և որի ներգրավվածությունը կարգապահական վարույթներում, ըստ կանոնագրքի, կոմպլիմենտար է՝ ծառայողական քննություն իրականացնող անձին լրացնող: Այդուհանդերձ, հարցազրույցների հիման վրա պարզ դարձավ, որ չնայած օրենսդրական նման անորոշ կարգավորմանը, ներկայումս կարգապահական կոպիտ խախտումների դեպքերով վարույթները քննվում են կենտրոնացված եղանակով՝ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում:

Որպեսզի ապահովվի որոշումների միասնականություն ու շարունակականություն, որն, ըստ էության, կհամարվի բարեվարքության նորմերի

մեկնաբանության ու կիրառման հիմնական ու միակ աղբյուրը, **անհրաժեշտ է ունենալ կարգապահական/ծառայողական քննությունների մեկ միասնական կոլեգիալ մարմին**, որը կունենա մշտական գտնվելու վայր, մշտական աշխատակազմ, ամբողջական քննություն իրականացնող ու որոշում կայացնող մշտական հիմունքներով գործող մասնագիտական կազմ, որը կոլեգիալության կազմով բաղկացած կլինի ՆԳՆ տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներից, որի կազմում կարող է լինել նաև ՆԳՆ համակարգում բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝ այդ թվում նաև քաղաքացիական ծառայողների բարեվարքության հարցերով մասնագետը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ԿԿՀ ներկայացուցիչը:²⁶ Նման մարմինը շարունակաբար կայացնելով որոշումներ ու իր որոշումներում հետևողականորեն մեկնաբանելով ու կիրառելով կարգապահական կանոնները, ի վիճակի կլինի ձևավորել իր սեփական «նախադեպային իրավունքը», որով աստիճանաբար կձևավորվի միասնական էթիկական դաշտ ուստիկանության համակարգում, որն էլ իր հերթին կապահովվի իրավական որոշակիություն ու կանխատեսելիություն ուստիկանության ծառայողների համար: Կարգապահական մարմինը հնարավորություն կունենա համագործակցել բարեվարքության վերաբերյալ կրթության ու հանրային իրազեկման ծրագրերում ներգրավված ՆԳՆ այլ մարմինների՝ այդ թվում անհրաժեշտության դեպքում նաև ՆԳՆ քաղաքացիական ծառայողների կարգապահական պատասխատվության հարցերով մարմինների հետ: Սակայն կարգապահական/ծառայողական քննության ներկա կառուցակարգը դեռ հեռու է այս իրավիճակից:

Ներկայումս ՆԳՆ-ի համակարգում կարգապահական/ծառայողական քննության համակարգի կազմավորումը գտնվում է անցումային փուլում: 2022 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՕ-477-Ն օրենքով փոփոխություն է կատարվել կանոնագրքում, որով սահմանվել է հանձնաժողովի ձևավորման նոր կարգ: Մինչև նշված փոփոխությունը, կանոնագրքի 43.1 հոդվածի 8-րդ կետի համաձայն կարգապահական հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը սահմանելու լիազորությունը վերապահված է եղել ՀՀ կառավարությանը, որի հիմքով էլ կառավարությունը 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1672-Ն որոշմամբ սահմանել է ՀՀ ուստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը, որը գործում է մինչ այժմ: **Խորհրդի կազմավորման այս կարգն է եղել պատճառներից մեկը, որ խորհուրդը հիմնականում մնացել է որպես եզրային դերակատար:** ՀՕ-477-Ն օրենքով Կանոնագրքի 43.1-ին հոդվածի 8-րդ մասով

²⁶ Հետազոտությունը կատարելու պահին՝ 2024թ. հունվարի 24-ին ՆԳՆ կայքում տարածվեց [հայտարարություն](#) ՆԳՆ կարգապահական հանձնաժողովի կազմում հասարակական միավորումների ներկայացուցիչներ ընդգրկելու նպատակով հայտերի ընդունելության մասին:

սահմանվել է, որ կարգապահական հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը սահմանելու լիազորությունը այսուհետ վերապահվել է պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարին, այսինքն ՆԳՆ նախարարին: Ներկայումս շրջանառության մեջ է ՆԳՆ կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանելու մասին ներքին գործերի նախարարի հրամանի [նախագիծը](#): Ըստ նախագծի՝ հանձնաժողովը լինելու է մշտապես գործող մարմին, որի նպատակը ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից կատարված կարգապահական կոպիտ խախտումների առթիվ իրականացված ծառայողական քննության նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն է և նրանց գործողությունների իրավաչափության որոշումը: Կարգապահական կոպիտ խախտումների ցանկը սահմանված է Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի 1-11 կետերում:

Նախագծի և ներկա կանոնագրքի միջև հանձնաժողովի լիազորությունների տարբերությունը նրանում է, որ եթե ներկա կանոնագրքով կարգապահական հանձնաժողովին վերապահված է կարգապահական կոպիտ խախտումների վարույթներով հավաքված քննության նյութերը և եզրակացությունը (մինչև որոշում կայացնող պաշտոնատար անձին (ծառայողական քննություն նշանակող անձին) ներկայացնելը) **քննության առնելը**, որն էլ սահմանված է հայեցողական կերպով («կարող է քննության առնվել»), նախագծով իմպերատիվ կերպով սահմանվում է, որ հանձնաժողովը իրականացնում է կարգապահական կոպիտ խախտումների հիմքով իրականացված քննության նյութերի **բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն** և արարքի **իրավաչափության որոշում**: Այսպիսով, նախագծով հանձնաժողովին վերապահվում է ամբողջական քննություն կատարելու և վերջնական որոշում կայացնելու լիազորություններ՝ ի տարբերություն ներկայումս գործող կարգավորման: Հանձնաժողովի նման մոդելը ի վիճակի է կազմավորել այն կառուցակարգը, որի մասին նշվեց վերևում:

ՆԳՆ անձնակազմի համալրման գործընթացում բարեվարքության ներմուծումը նույնպես անցումային փուլում է, սակայն այն իրականացվում է հետևողականորեն ու աստիճանաբար ձեռք է բերում ինստիտուցիոնալ բնույթ: ՀՀ փոխվարչապետի որոշմամբ սահմանվել է ՆԳՆ քաղաքացիական ծառայության պաշտոններում թեկնածուների հետ հարցազրույցի անցկացման կարգ:²⁷ Հարցազրույցներն անցկացվում են շարունակաբար, որոնց վերաբերյալ պարբերաբար [հրապարակվում է](#) տեղեկատվություն ՆԳՆ պաշտոնական կայքում: Հարցազրույցներին մասնակցում են ՆԳՆ ծառայողները ու մասնագետները, ինչպես նաև ՆԳՆ համակարգում քաղաքացիական ծառայության բարեվարքության

²⁷ 2023 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակելու դեպքում թեկնածուի հետ հարցազրույցի անցկացման կարգը սահմանելու մասին» N 288-Ս որոշում:

հարցերով մասնագետը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Հարցազրույցների ընթացքում տրվում են նաև բարեվարքության մասին հարցեր: Սակայն, հարցազրույցի մասնակիցները չունեն բարեվարքության նորմերի և սկզբունքների մասին միասնական գրականություն, օրինակ՝ ուղեցույց, հարցաշար, բացատրական զեկույցներ և այլն: Հաճախ մասնակիցներն իրենց հարցերը ձևակերպում են հանպատրաստից՝ ելնելով իրենց մասնագիտական փորձից: Ցանկալի է, որ մշակվի կամ կիրառվի բարեվարքության միասնական ուղեցույցներ, օրինակ, ԿԿՀ-ի Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների բացատրական ուղեցույցը:

Անցումային փուլում է գտնվում նաև բարեվարքության շարունակական կրթության ամբողջական ու կայուն համակարգի ստեղծման գործընթացը: Հետազոտության իրականացման շրջանակում հարցազրույցներ են իրականացվել ՆԳՆ ներկայացուցիչների և ընդունելության հարցազրույցների հանձնաժողովում ներգրավված անձանց հետ, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ ՆԳՆ կրթահամալիրում ներկայումս ներդրված չեն բարեվարքությանը վերաբերող առանձին դասընթացներ և/կամ մոդուլներ: Այնուամենայնիվ, ըստ ՆԳՆ ներկայացուցչի պնդման, եթե նույնիսկ բարեվարքության մասին առանձին դասընթաց չընդգրկվի կրթական ծրագրում, նման դասընթացը կմատուցվի շարունակական վերապատրաստումների և/կամ ծառայողական պապմունքների շրջանակում: Ողջունելի է այն հանգամանքը, որ համաձայն ՆԳՆ կրթահամալիրի պաշտոնական կայքէջում [հրապարակված տեղեկատվության](#)՝ վերապատրաստման կենտրոնն ունի «Հակակոռուպցիոն պարտադիր վերապատրաստում» վերտառությամբ դասընթաց, ինչպես նաև «Ոստիկանության ծառայողների էթիկա» վերտառությամբ դասընթաց է ներառված կրթահամալիրի ակադեմիայի հիմնական ծրագրում: Սակայն, ՆԳՆ ներկայացուցիչների հետ իրականացված հարցազրույցների արդյունքում պարզ դարձավ, որ ոստիկանության ծառայողների թե՛ մասնագիտական, թե՛ բարեվարքության հարցերով վերապատրաստման և «նոր ոստիկանի» տեսլականին հասնելու ուղղությամբ կրթական բարեփոխումների ճանապարհային քարտեզն ամբողջությամբ գծված չէ: Ավելին, կրթական բաղադրիչին վերաբերող շատ հարցեր դեռևս քննարկման առարկա չեն դարձել, այն պայմաններում, երբ ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ օրենսդրական փաթեթից որոշ օրենքներ արդեն իսկ ընդունվել են, որոշներն էլ շուտով կընդունվեն (օրինակ, Ոստիկանության գվարդիայի մասին օրենքի նախագիծը): Գտնում ենք, որ օրենսդրական փոփոխությունները և դրանց համապատասխան կրթական ծրագրերի վերամշակումները պետք է զուգահեռ իրականացվեն, քանզի նույնիսկ անթերի կառուցվածք և բովանդակություն ունեցող օրենքի կյանքի կոչողը և դրա արդյունավետության ապահովման երաշխավորը իրավակիրառող կոնկրետ

նստիկանն է, ում կրթական և բարեվարքության զարգացումը պետք է զուգահեռ ընթանա օրենսդրական բարեփոխումների հետ:

- Առաջարկություններ

ՆԳՆ-ում բարեվարքության ներկա համակարգը իր ամբողջության մեջ չի համապատասխանում Հանրային ծառայության մասին օրենքին, ԿԿՀ-ի բարեվարքության տիպային կանոնների պահանջներին, բարեվարքության միջազգային սկզբունքներին: Առաջարկվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները.

- ՆԳՆ-ում կառուցվող բարեվարքության համակարգը պետք է լինի ինստիտուցիոնալ բնույթի, որի մարմինները պատասխանատու լինեն հետևյալ չորս ուղղություններով բարեվարքության համակարգի ամբողջական ու համակարգված զարգացման համար՝ **կադրերի** համալրում, շարունակական **կրթություն**, հանրային **իրազեկում** և **կարգապահական** պատասխանատվություն:
- Անհրաժեշտ է Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի բարեվարքության մասին նորմերը համապատասխանեցնել Հանրային ծառայության մասին օրենքի Գլուխ 5-ի հիման վրա: Մասնավորապես՝ անհրաժեշտ է Ոստիկանությունում ծառայության մասին օրենքում անհամապատասխանելիության, նվերների ընդունման արգելքների, պետական գույքը օգտագործելու սահմանափակումների, քաղաքական չեզոքության վերաբերյալ ու հավաքների ազատության սահմանափակումների վերաբերյալ նորմերը (հոդված 39) ու այլ վարքագծային սահմանափակումները համապատասխանեցնել Հանրային ծառայության մասին օրենքի Գլուխ 5-ի նորմերի հետ:
- Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը մեծամասամբ չի համապատասխանում Հանրային ծառայության մասին օրենքի Գլուխ 5-ի և ԿԿՀ-ի [Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին](#): Քանի որ անհրաժեշտ է կատարել արմատական փոփոխություններ, պետք է ընդունել նոր կանոնագիրք, այլ ոչ թե բարեփոխել գործող Կանոնագիրքը:
 - Վարքագծի նոր կանոնագիրքը պետք է կազմել Հանրային ծառայության մասին օրենքի Գլուխ 5-ի նորմերի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները: Այդ իմաստով առաջարկվում է օգտագործել ՊԵԿ-ի Մաքսային ծառայության փորձը, որը Մաքսային ծառայողի վարքագծի կանոնները մշակել է ԿԿՀ-ի տիպային

կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով մաքսային ծառայության ոլորտի առանձնահատկությունները:

- Անհրաժեշտ է ունենալ ծառայողական/կարգապահական պատասխանատվության միասնական, մշտական հիմունքներով գործող, մշտական աշխատանքային կազմ ունեցող և մշտական հանգրվան ու շենքային պայմաններ ունեցող կարգապահական խորհուրդ: Խորհրդի կազմը պետք է լինի կոլեգիալ՝ բաղկացած ՆԳՆ տարբեր մարմինների ներկայացուցիչներից, որի կազմում կարող են լինել նաև ՆԳՆ քաղաքացիական ծառայության բարեվարքության հարցերով մասնագետը և ԿԿՀ-ի ներկայացուցիչը: Խորհուրդը պետք է իրավասու լինի կայացնելու վերջնական ու պարտադիր իրավաբանական նշանակության որոշումներ՝ ժամանակի ընթացքում ձևավորելով «նախադեպային» որոշումների քանական ու որակական ամբողջություն, որոնք կապահովեն կանխատեսելի ու մանրամասն վարքագծի ուղեցույցներ ուստիկանության ծառայողների համար:
- Կարգապահական պատասխանատվության մասին որոշումները պետք է հրապարակվեն՝ բացառությամբ օրենքով ու կանոնադրով սահմանված այն դեպքերի, օրինակ, երբ որոշումը առնչվում է օրենքով պաշտպանված գաղտնիքի, կամ երբ վարույթն իրականացվել է դոնփակ՝ ելնելով անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից և այլն:
- Անհրաժեշտ է ատեստավորման փուլերում (տեստավորում, ստուգարք և հարցազրույց) ներառել բարեվարքության մասին թեմաներ: Այդ նպատակով անհրաժեշտ է ուստիկանի մասնագիտական կարողությունների գնահատման հիմքերին զուգահեռ մշակել նաև բարեվարքության գնահատման՝ տեստերի, ստուգարքի և հարցազրույցի համար համապատասխան նյութեր:
- «Ուստիկանությունում ծառայության մասին» օրենքում և Կանոնադրում «ծառայողական» և «կարգապահական» եզրերի օգտագործումը պետք է աստիճանաբար տարբերակվի: Դրանց նույնականացումը հակասում է հանրային ծառայողների բարեվարքության նորմերին: Մասնավորապես, հանրային ծառայողների վարքագծի որոշ նորմեր ներառում են նաև վարքագիծը անձնական կյանքում (ընտանիքում, տանը, հանրային միջավայրում, աշխատանքային ժամերից դուրս), մինչդեռ «ծառայողական» եզրի օգտագործումը օրենքներում կամ պրակտիկայում նախանշում է, որ տվյալ նորմը և դրա հիման վրա հարուցված վարույթը վերաբերում են բացառապես աշխատանքային կամ հանրային ծառայության վայրում դրևորված կամ ծառայության հետ կապված վարքագծի:

- Առաջարկվում է վերացնել տարբերակված մոտեցումը, համաձայն որի կարգապահական հանձնաժողովը կարող է ամբողջական քննություն կատարել ու որոշում կայացնել միայն Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կարգապահական կոպիտ խախտումների հիմքով: Մտացվում է, որ մնացած վարքագծային խախտումների համար քննությունը կատարվելու է միանձնյա՝ քննություն իրականացնող անձի կողմից: Նման տարբերակված մոտեցումը կարող է վնասել միասնական էթիկական միջավայր ստեղծելու վերը նշված ստրատեգիական մոտեցմանը, քանի որ նոր կանոնագիրքը պետք է կազմվի ԿԿՀ-ի տիպային կանոնների հիման վրա, որտեղ նման տարբերակում, ինչպես վերը նշվածը, բացակայում է: Նման տարբերակված մոտեցումը բացակայում է նաև Հանրային ծառայության մասին օրենքի Գլուխ 5-ում:
- Կադրերի համալրման հիմքով հարցազրույցներում բարեվարքության թեմային անդրադառնալիս առաջարկվում է օգտագործել ԿԿՀ-ի Հանրային ծառայողների վարքագծի կանոնները և դրա Բացատրական ուղեցույցը՝ հարցեր կամ իրավիճակային խնդիրներ ձևակերպելիս:

Հավելված 1

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված նյութերի և հանդիպումների ցանկ

1. [2015թ. սահմանադրական փոփոխություններ](#),
2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական [օրենք](#),
3. «Դատախազության մասին» ՀՀ [օրենք](#),
4. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ [օրենք](#),
5. «Ոստիկանության գորքերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» [օրենք](#),
6. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ [օրենք](#),
7. Հանրային ծառայության մասին [օրենք](#),
8. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 16-ի [ՀՕ-457-Ն օրենք](#),
9. ՀՀ ոստիկանության [կարգապահական կանոնագիրք](#),
10. «Ոստիկանության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու [օրենքների նախագծեր](#),
11. «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի [նախագիծ](#),
12. ՆԳՆ կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանելու մասին ներքին գործերի նախարարի հրամանի [նախագիծ](#),
13. «ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության թիվ [638-Լ որոշում](#),
14. «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ազգային ժողովի [որոշում](#),
15. ՀՀ վարչապետի 2020 թվականի դեկտեմբերի 06-ի [N 903-Ա որոշում](#),
16. «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ազգային ժողովի [որոշում](#)
17. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի n 892-Ն [որոշում](#),
18. 2023 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում

- նշանակելու դեպքում թեկնածուի հետ հարցազրույցի անցկացման կարգը սահմանելու մասին» N 288-Ա որոշում,
19. ՀՀ ոստիկանության պետի «Մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման, մարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումներում տեղադրված տեսագրող համակարգերի տեխնիկական բնութագրերը, տեսագրությունների պահպանման, օգտագործման կարգը, ինչպես նաև տեսագրմանն առցանց հետևելու, տեսագրություններին հասնաելիություն ունեցող ոստիկանության ծառայողների շրջանակը հաստատելու և ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի մարտի 31-ի N 17-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 25.07.2022 թ. [թիվ 26-Լ հրաման](#),
 20. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի [տիպային կանոններ](#),
 21. [Սաղաթեյանն քնդդեմ Հայաստանի](#) գործով ՄԻԵԴ վճիռ թիվ 23086/08, 20/09/2018թ.,
 22. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի [2020](#), [2021](#), [2022](#) թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներ,
 23. Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի [կիսամյակային և տարեկան հաշվետվություններ](#),
 24. «Քննիչ հանձնաժողովների արդյունավետությունը խորհրդարանական վերահսկողության լույսի ներքո» [հետազոտություն](#),
 25. Ազգային ժողովում մոնիտորինգ իրականացնող խմբի կողմից հրապարակված [զեկույց](#),
 26. ԵԱՀԿ փորձագետ Լատրի Տաբուրի կողմից ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ 2023 թվականին հրապարակված գնահատական,
 27. Թիվ 1601 (2008) բանաձևը ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընթացակարգային ուղեցույցների մասին: [Resolution 1601 \(2008\) on Procedural guidelines on the rights and responsibilities of the opposition in a democratic parliament](#),
 28. [Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում](#)

29. 2022 թվականի դեկտեմբերի 16-ի Կառավարության նախաձեռնությամբ հրավիրված ՀՀ ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի [սղագրություններ](#),
30. ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 06-ի նիստի [տեսաձայնագրություն](#),
31. 2022 թվականի հուլիսի 12-ի Ազգային ժողովում տեղի ունեցած Ներքին գործերի նախարարության ստեղծման վերաբերյալ [խորհրդարանական լսումներ](#),
32. 2023 թ. ընթացքում ՆԳՆ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կատարած աշխատանքների վերաբերյալ [հրապարակում](#),
33. Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ www.parliament.am,
34. ՆԳՆ պաշտոնական կայքէջ www.mia.gov.am,
35. ՆԳՆ կրթահամալիրի պաշտոնական կայքէջ www.edupolice.am,
36. ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջ www.police.am,
37. Հետազոտության ընթացքում 2024 թվականի հունվարի 29-ին տեղի է ունեցել հարցազրույց «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի ներկայացուցիչների, ՆԳՆ Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Արմեն Մկրտչյանի և վարչության պետի տեղակալ Հրանտ Թորոսյանի միջև:
38. 2024 թվականի փետրվարի 13-ին տեղի է ունեցել հարցազրույց «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի ներկայացուցիչների, ՆԳՆ Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Արմեն Մկրտչյանի և նույն վարչության Հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի ոլորտում քաղաքականության մշակման ու մոնիթորինգի բաժնի պետ Նատալի Սահակյանի միջև:
39. Հարցումներ են իրականացվել ՀՀ փաստաբանների պալատի անդամներ Կարեն Տոնոյանի (արտոնագիր 1752) և Աշխեն Դաշյանի (արտոնագիր 1930) հետ:
40. Ուսումնասիրվել են նաև ՀՀ ՆԳ փոխնախարար Արփինե Սարգսյանի ելույթները և տարբեր ԶԼՄ-ներին տված հարցազրույցները, ՀՀ արդարադատության նախկին նախարար Ռուստամ Բադասյանի և ՀՀ Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանի մեկնաբանությունները ՀՀ ՊԵԿ կազմում գործող քննչական ստորաբաժանման և ԱԱԾ քննչական դեպարտամենտի՝ ՀՀ Քննչական կոմիտեին միանալու գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրության առարկա ոլորտներին առնչվող պաշտոնատար անձանց բազում հարցազրույցներ, ԶԼՄ տարածած հայտարարություններ և

պետական մարմինների՝ սոցիալական կայքերում տրվող պաշտոնական
լրահոսը: